

# ՆԱԽԱՁԱՅՆԻՉ

3.2003

digitised by A.R.A.R.@




# ՆԱԽԱՇԱՎԻՂ

3.2003

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Գլխավոր խմբագիր՝
*Վիկտոր Մարտիրոսյան*
Հրատարակչական խմբագիր՝
*Մարիամ Պետրոսյան*
Համարի պատասխանատու՝
*Կարինե Թորոսյան*
Կոորդինատոր՝
*Լալա Սմբատյան*
Խմբագիր, սրբագրիչ՝
*Գոհար Ամիրբեկյան*
Համակարգչային շարվածքը՝
*Լալա Սմբատյանի*
Հիմնադիր և հրատարակիչ՝
*ԿԳՆ կրթական բարեփոխումների կենտրոն*

Հասցեն՝
*Տիգրան Մեծի 67*
Հեռ՝ *57-21-62, 57-21-00*
Հանձնված է տպագրության՝ *21.8.2003*
Ծավալը՝ *4 տպ. մամուլ*
Տպաքանակը՝ *2000*
Թուղթը՝ *օֆսեթ*
Չափսը՝ *70X100 1/6*
Դպրոցներին տրվում է
ԱՆՎՃԱՐ
Գրանցման վկայական՝ *1004*

*375111, 67 Tigran Metsi,*
*Yerevan, Armenia*
*Phone 572162, 572100*
*Printed 2000 semples*



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿԳՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ


Բարին ճառագում է հեռվից՝ ինչպես ձյունե գագաթը, չարը մնում է աննկատ՝ որպես գիշերով արձակված նետը:

Վեհանձն մարդուն ուրախացնում է ազնվությունը, անազնիվին չի ուրախացնում վեհությունը: Անտառից լոտոսի մոտ գնում է մեղուն և ոչ թե գորտը, եթե անգամ վերջինս նույն լճում ապրի:

Չար արարքները միանգամից չեն սկսում եռալ ինչպես կաթը, դրանք նման են կրակին՝ մարմրում են մոխրի տակ և դանդաղ հրի մատնում խեղքից բռնիկ մարդուն:

Արծիվը ճանճեր չի որսում, բայց ճանճերը ձանձրացնում են նաև նրան:


digitised by A.R.A.R.@

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
*Մանկական թոթովանքից մինչև գեղարվեստական խոսք* ........ 3

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ
*Մաթեմատիկական տեստեր երրորդ դասարանցիների համար* ........ 8

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
*Հանելուկները և դրանց դերը դպրոցականների կյանքում* ........ 14

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
*Գույնը՝ որպես սովորողների ստեղծագործական ակտիվության բարձրացման միջոց* ..... 19

ԴՊՐՈՑԻ ՇԵՄԻՆ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
*Ձեր երեխան դպրոց է գնալու* ........ 23

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
*Երաժշտամաթեմատիկական խաղերի կիրառումը նախադպրոցականի ուսուցման գործընթացում* ........ 29

*Երեխաներին վարժեցրե՛ք ճիշտ արարքների* ........ 34

Ժ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
*Երեխաների բազմակողմանի զարգացումը՝ բնական նյութերով աշխատելու ընթացքում..* 37

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ե. ԴԱՆԻԵԼՈՎԱ
*Երրորդ դասարանցիները* ........ 40

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ

Շ. ՍԱՐԳՍՅԱՆ
*Աշխարհի յոթ հրաշալիքները* ........ 44

ԿԱՐԴԱՑԵ՛Ք ՓՈՔՐԻԿՆԵՐԻՆ ........ 53

ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ

А. ФАРИДА
***Индивидуализация и дифференциация процесса обучения младших школьников*** 58



104 - 2003

20948-ԱՀ

digitised by

# Մանկական թոթովանքից մինչև գեղարվեստական խոսք ...

Յուրաքանչյուր երգ ունի իր սկիզբը: Յուրաքանչյուր երգի ակունք մարդու սիրտն է: Մեզ շրջապատող աշխարհի անօրինակ գեղեցկությունը տեսնելը և նրա մասին պատմելու կարողությունը մեծ երջանկություն է: Բնության գեղեցկությունը գեղեցիկ խոսքին զուգորդելն այնպիսի արվեստ է, որին հաղորդակից ենք լինում մանկուց:

Մանկական թոթովանքից մինչև գեղարվեստական խոսք ... Այս ճանապարհը սկիզբ է առնում դպրոցից: Բազմազան են այդ ճանապարհին հանդիպող դժվարությունների հաղթահարման ուղիները: Դրանցից մի քանիսը փորձարկվեց Երևանի Կ.Դեմիրճյանի անվան թիվ 139 դպրոցի II դասարաններում: Ստորև ներկայացնում ենք նմանատիպ ուսուցման մի քանի եղանակներ:

<u>II «ե» դասարան, դասվար՝ Կարինե Խալաֆյան</u>

Փոխադրության ուսուցման դաս

Թեման՝ «Ձնծաղիկը»[1] ըստ Օնիկ Փանիկյանի

*Նպատակը*՝ 1. Բնագրի ճիշտ, հեղինակային տեքստին հարազատ փոխադրում,
2. Խոսքի կառուցման հմտությունների մշակում,
3. Ուղղագրական և վայելչագրական կանոնների ամրակայում:

Դասի ընթացքը՝ (նախօրոք պատին փակցնել ձմեռային և գարնանային տեսարանների ու ձնծաղկի նկարներ)

1.Մեկ անգամ ընթերցել բնագիրը:

2.Վեր հանել գաղափարը՝ հիմնական միտքը (բարեկամության, միասնության, համերաշխության գաղափարները ձևակերպում են երեխաները):

Երկու երեխայի հանձնարարվում է կարդալ դուր եկած հատվածները և բաժանել տրամաբանական մասերի:

1. « Ձմեռը և գարունը անբաժան ընկերներ էին: Նրանք երկուսն էլ սիրում էին ծաղիկներ»:

Ընթերցումից հետո երեխաները տալիս են տվյալ հատվածին համապատասխանող հարցը:

(հարցնել մի քանի երեխաների, ընտրել ամենահաջողված հարցը ) :

Ձմեռն ու գարունը ի՞նչ կապեր ունեն և ի՞նչ են սիրում:

Երեխաները պատասխանում են հարցին: Պատասխանների ժամանակ հարկավոր է ուշադրություն դարձնել ուղղագրական դժվարություններ ներկայացնող բառերին և դժվար բառերը գրել գրատախտակին՝ (գրում են երեխաները):

2. «Մի օր, սակայն, ձմեռը մտածեց, որ ինքը զրկվել է ծաղիկների թովիչ գույներից ու քաղցր բուրմունքից: Նա խնդրեց գարնանը, որ իրեն մի ծաղիկ նվիրի »:

Երեխաներն առաջադրում են հարցը՝

Ի՞նչ մտածեց մի օր ձմեռը և ի՞նչ խնդրեց գարնանը: Պատասխանում են 2-3 երեխա: Պատասխանների ժամանակ առանձնացնում ենք ուղղագրական

[1] Ա.Ամիրյան, Կ.Թորոսյան, Ն.Վիրաբյան, Արտագրության, թելադրության, փոխադրության և շարադրության նյութերի ժողովածու, Երևան,1999 թ., էջ 124:



A.R.A.R.@

արժեք ունեցող բառերը՝ *թռվիչ, քաղցր, խնդրեց*: Գրում են գրատախտակի աջ կողմում՝ տվյալ հարցի դիմաց, որպեսզի բառերից օգտվելով՝ պատասխանեն հարցին: Երեխաները բացատրում են այդ բառերի իմաստը, ասում հոմանիշները և հականիշները:

1.«Գարունն իր փնջից մի համեստ ծաղիկ ընտրեց ու ասաց. «Ես ցանկանում եմ, որ այս ծաղիկը մեր երկուսի բարեկամության, մեր միասնության խորհրդանիշը լինի»:

Երեխաների տված հարցը գրում ենք գրատախտակին՝

Ի՞նչ արեց գարունը և ի՞նչ ասաց:

Երեխաները պատասխանում են երրորդ դեմքով: Միասնություն և խորհրդանիշ բառերը գրվում են գրատախտակին, բացատրվում է դրանց ուղղագրությունը: *Միասնություն* բառը բաժանում են վանկերի, կատարում *խորհրդանիշ* բառի բառակազմական վերլուծությունը՝

խորհուրդ ( խորհուրդ)+ ա +նիշ:

4. «Այս ծաղիկը ձյունի պես սպիտակ իր թերթիկներով նման է քեզ, բանկագի՛ն Ձմեռ, այս ծաղկի անունը պիտի Ձնծաղիկ դնենք: Սա կլինի առաջին ծաղիկը, որ պիտի ծաղկի քո ծոցից, քո ձյուների տակից»:

*Լավագույն հարցը գրել գրատախտակին՝*

Ինչպե՞ս անվանեցին ծաղկին և ինչու՞:

Խրախուսել տարբեր ձևերով արտահայտված պատասխանները:

Երեխաները գրում են *սպիտակ* բառը և վանկերի բաժանում: Բառակազմական վերլուծության են ենթարկում *բանկագին* բառը: Գրում են *ծաղկի* բառի ուղիղ ձևը, բացատրում ուղղագրությունը և *առաջին* (ջ-չ) բառի ուղղագրությունը:

5. «Շնորհակալությո՛ւն, - ասաց ձմեռը, և համբուրվեցին»:

Երեխաները տալիս են հարցը՝

Ի՞նչ ասաց ձմեռը:

Առաջին հերթին ուշադրություն դարձնել բովանդակությանը, ոճին, III դեմքով պատմելու եղանակին, ժամանակի պահպանմանը և այլն: Ուշադրություն դարձնել «Շնորհակալ լինել գարնանը», «Շնորհակալություն հայտնեց գարնանը» արտահայտությունների վրա:

Այնուհետև անդրադառնալ բառային աշխատանքին՝ բացատրելով *շնորհակալություն* և *համբուրվեցին* բառերի ուղղագրությունը:

*Գրատախտակին հետևյալ գրառումն է.*

| | |
|---|---|
| 1. Ձմեռն ու գարունը ի՞նչ կապեր ունեն, և ի՞նչ են սիրում նրանք: | |
| 2. Ի՞նչ մտածեց մի օր ձմեռը և ի՞նչ խնդրեց գարնանից : | թռվիչ, քաղցր, խնդրել |
| 3. Ի՞նչ արեց գարունը և ի՞նչ ասաց : | միասնություն, մի-աս-նու-թյուն, խորհրդանիշ=խորհուրդ (խորհուրդ) + ա+նիշ |
| 4. Ինչպե՞ս անվանեցին ծաղկին և ինչու՞: | սպիտակ, ըս-պի-տակ, սպի-տակ, բանկագին = բանկ+ա+գին ծաղկի-ծաղիկ, առաջին |
| 5. Ի՞նչ ասաց ձմեռը: | շնորհակալություն, համբուրվեցին |

Հարցերով ամփոփել՝ ընդգրկելով բոլոր երեխաներին: 3 – 4 երեխայի առաջարկել պատմել՝ շարունակելով միմյանց: Երկու երեխայի հանձնարարել՝ պատմել ամբողջությամբ և սկսել գրել:



digitised by

II «գ» դասարան, դասվար՝ Սուսաննա Ղալեչյան
Ծարադրության ուսուցման դաս

Թեման՝ «Գարուն»

*Նպատակը՝* 1. Խոսքի կառուցման հմուտությունների մշակում,
2. Գեղարվեստական խոսքի ճանաչողություն (օրինակելի խոսքի վերլուծություն),
3. Ուղղագրական և քերականական օրինաչափությունների կիրառում,
4. Վայելչագրական կանոնների պահպանում,
5. Բառապաշարի հարստացում:

*Դասի ընթացքը*

Պատերին փակցված են գարնանային տեսարաններ պատկերող նկարներ, սեղանին՝ դաշտային ծաղիկներ են:

Դասն սկսվում է «Գարնանային տրամադրություն» երգով: Ապա երեխաները, աչքերը փակ, ունկնդրում են Անտոնիո Վիվալդիի «Տարվա եղանակները » կոնցերտի «Գարուն» թեմայից մի հատված: Հետո պատմում են երաժշտության ներգործության մասին, թե ինչ պատկերացրին երաժշտությունն ունկնդրելիս:

Նորից հնչում է նույն երաժշտությունը, և երեխաները նկարում են իրենց զգացած–տեսածը: Ապա ցուցադրվում են նկարները, և երեխաները պատմում են դրանց մասին:

Ուսուցիչ: Մեծ երջանկություն է մեզ շրջապատող աշխարհը տեսնելը: Առավել երջանիկ են նրանք, ովքեր կարողանում են պատմել նրա մասին երաժշտությամբ, գույներով կամ գեղարվեստական խոսքով:

*1. Գրատախտակին գրված է.*

Արևելքը շառագունում է: Պայծառ աստղերն աստիճանաբար աղոտանում են: Մասիսի երկնահուպ գագաթը շողշողում է: Արագածի բարձր կատարը չի երևում. որպես ամոթխած հարսիկ՝ նա սքողել է իր դեմքը անթափանց շղարշով: Հրակարմիր հորիզոնում արթնանում է արեգակը: Նրա ոսկեվարս շողերի տակ փայլփլում են ցողաթաթախ ծաղիկները: Մութ գիշերը աղամանդի փոշի է շաղ տվել նրանց վրա:

Րաֆֆի

Երեխաները նախ կարդում են մտքում՝ լսելով ուսուցչի ընթերցումը, ապա բարձրաձայն շարունակում են կարդալ 2–3 աշակերտներ: Առանձնացնում են խոսքի պատկերավորման միջոցները.

1. մակդիրներ՝ <u>երկնահուպ</u> գագաթ (երկնահուպ = երկն (երկինք)+ա+հուպ (հպվել) (բացատրում են)
<u>ամոթխած</u> հարսիկ
<u>անթափանց</u> շղարշ (ան+թափանց (ել))
<u>հրակարմիր</u> հորիզոն (հր (հուր) +ա +կարմիր)
<u>ոսկեվարս</u> շողեր (ոսկե + վարս)
<u>ցողաթաթախ</u> ծաղիկներ (ցող+ա+թաթախ)

2. համեմատություն՝ «որպես ամոթխած հարսիկ»,
3. անձնավորում՝ «սքողել է իր դեմքը», «արթնանում է արեգակը»,
4. փոխաբերություն՝ « սքողել է իր դեմքը անթափանց շղարշով»,
«մութ գիշերը աղամանդի փոշի է շաղ տվել»
(բացատրում են ուղիղ իմաստը)

*Գրում են զործածված հոմանիշները.*

շառագույն – հրակարմիր (շիկակարմիր, կարմիր, բոսոր )
երկնահուպ - բարձր
գագաթ – կատար
Իրենք էլ նշում են աղոտանալ – խամրել, երկնահուպ - երկնասլաց, ամոթխած - ամաչկոտ,
սքողել – թաքցնել, շղարշ – քող հոմա-



A.R.A.R.@

նիշները:

*Եզրակացություն:*
Գեղարվեստական խոսքը նման է առօրյա խոսքին: Այն պարզապես հարուստ է պատկերավորման միջոցներով: Այստեղ բառերը չեն կրկնվում՝ գործածվում են հոմանիշներ:

Եզրակացության հանգում են երեխաները:

❂❂❂

*2. Գրատախտակին գրված է.*

Երքներանգ ծաղիկները զարդարել են բուրաստանները: Երքներանգ թիթեռների փնջերը ճախրում էին երքներանգ ծաղիկների մեջ և անսահման հաճույք պատճառում դիտողին: Մայր բնությունը անսահման հաճույքով հիանում է ինքն իրենով:

Աշակերտները նախ ուղղում են ուղղագրական սխալները (երքներանգ - երփներանգ), ապա ասում նույն ուղղագրության բառեր (արփի, փրփուր):

Նրանք նկատում են, որ «երփներանգ» բառը երեք անգամ գործածվել է նույն տեքստում: Որոշում են փոխարինել հոմանիշներով՝ երփներանգ - գույնզգույն– խայտաբղետ, հազարերանգ, հազարաթույր:

Թերևացնում են տեքստը: Ուղղում են քերականական սխալը՝ *ճախրում էին - ճախրում են:*

Վերջում կարդում են ուղղված տարբերակը՝

Երփներանգ ծաղիկները զարդարել են բուրաստանները: Գույնզգույն թիթեռների փնջերը ճախրում են ծաղիկների մեջ և անսահման հաճույք պատճառում դիտողին: Մայր բնությունը հիանում է ինքն իրենով:

Եզրակացություն (աշակերտների կողմից).

1. Պետք է պահպանել ուղղագրական և քերականական կանոնները:
2. Թույլ չտալ բառային կուտակումներ, գործածել հոմանիշներ:
3.Խոսքը չծանրացնել պատկերավորման միջոցներով:

❂❂❂

*3. Գրատախտակին գրված է՝*

*Ծառերը ծաղկել են: Թռչունները վերադարձել են: Գարուն է: Աղբյուրները կարկաչում են:*

Երեխաները նկատում են, որ խախտված է նախադասությունների հերթականությունը, տեքստն էլ աղքատիկ է: Ուղղում են, հարստացնում, բայց չեն ծանրաբեռնում:

*Եզրակացություն:* Պետք է պահպանել տրամաբանական հաջորդականությունը և չափավոր գործածել պատկերավորման միջոցները:

❂❂❂

4.Երեխաները միմյանց շարունակելով պատմում են գարնան մասին՝ գործածելով տրված բառակապակցությունները (չպարտադրված).

փաղորդյան արեգակ, ոսկեզօծ կատարներ, հազարերանգ ծաղիկներ, ցողաքաքախ վարդեր, թռչունների դայլայլ:

❂❂❂

5. Աշակերտները շարունակում են ուսուցչի անավարտ մտքերը.



digitised by

ա) Սևանի կապուտակ ջրերը ոսկեզօծվում են, արեգակն արթնանում է: …
բ) Ամպերը կառաղած գազանների նման վազում են իրար ընդառաջ: …
գ) Առուն, ծիծաղից ուշաթափված, ժայռից գած է ընկնում: …
դ) Ծաղիկները տրորում են իրենց քնքուշ աչիկները: …

Մի քանի սկիզբ էլ երեխաներն են առաջարկում: Ապա լսում են ուսուցչի խոսքը.

- Մայր բնությունը կրկին արթնանում է: Գարուն է իմ հայրենի երկրում: Ծաղիկները տարածել են իրենց արբեցնող բույրը, …

Ինչ հրաշք. դուք այս հիասքանչ բնության մի մասնիկն եք: Դուք մեր կյանքի ծաղիկներն եք և համոզված եղեք, սիրելիներս, մեծահասակներիս համար ձեզնից կարևոր ոչինչ չկա աշխարհում: Հաջողություն ենք մաղթում ձեզ:

Որոշում են շարադրության վերնագիրը՝

«Հազարաշող գարուն»

Ընտրում են բնաբան՝

Դռները բացե՛ք, գարուն է գալիս …

Հ.Սահյան

Այնուհետև սկսում են գրել շարադրությունը:

*Աստղիկ Նախապետյան*

Երևանի Կ. Դեմիրճյանի անվան
թիվ 139 դպրոցի փոխտնօրեն

*Խմբագրության կողմից:*

*Հոդվածում շարադրվածը ներկայացնում է նշված դպրոցի՝ փոխադրության ուսուցման փորձը: Մենք համոզված ենք, որ շատ դպրոցներում այսօր գործում են աշակերտների կապակցված խոսքի մշակման արդիական այլ մոտեցումներ, որոնք ապահովում են սովորողների առավել ինքնուրույն ինքնարտահայտման ձևեր:*

*Սպասում ենք ձեր փորձի հաղորդմանը:*

2013



A.R.A.R.@

# *Մաթեմատիկական տեստեր երրորդ դասարանցիների համար*

***Տեստերի ստեղծումը կրթական համակարգի արդիական հիմնահարցերից բխող անհրաժեշտություն է, որը պայմանավորված է հետևյալ աշխատանքների համատեքստով.***

- Հանրակրթական ռազմավարության մշակում:
- Առարկայական չափորոշիչների սկզբունքների սահմանում:
- Առարկայական չափորոշիչների կազմում:
- Հենքային ուսումնական պլանի և ծրագրերի կազմում:
- Ուսուցման նոր տեխնոլոգիաների ներդրում:
- Գիտելիքների և կարողությունների բացահայտման ու գնահատման նմուշների ստեղծում:
- Տվյալ առարկայի թեմատիկ տեստերի ստեղծում:

***Տեստեր կազմելու կիրառելի սկզբունքներից են.***

- Մեկ ճիշտ և մեկ սխալ պատասխաններից ընտրել ճիշտը:
- Մեկ ճիշտ և մեկից ավելի «ճշմարտանման» պատասխաններից ընտրել ճիշտը:
- Վերականգնել մի քանի հարցերի և նույնքան պատասխանների միջև գոյություն ունեցող փոխմիարժեք համապատասխանությունը:
- Լրացնել «բաց թողած մասերով» առաջադրանքը:
- Շարադրանքում գտնել ավելորդ կամ պակասող «նյութը»:
- Որոշել սխալ օգտագործված բառը կամ բառակապակցությունը:
- Ոչ ստանդարտ բնույթի առաջադրանքի ցուցումներից առանձնացնել լուծման «մեխը»:

***Տեստերից յուրաքանչյուրի համար ներկայացնենք երկուական օրինակ և կազմենք երկու թեմատիկ տեստ:***

1.1. Քառակուսին ուղղանկյու՞ն է.

ա) Այո՛: բ) Ո՛չ:

1.2. Ճի՞շտ է $V = S \cdot t$ բանաձևը.

ա) Այո՛: բ) Ո՛չ:

2.1. Քանի՞ վայրկյան է մեկ ժամը.

ա) 60, բ) 360, բ) 3600, գ) 24, դ) 1 ժամը = 60 րոպե:



digitised by

2.2. Հետևյալ թվերից ո՞րը կարող է լինել տրված հավասարմանը բավարարող թիվը. 367 – x = 452:

ա) 85, որովհետև 452 - 367 = 85:

բ) 819, որովհետև 452 + 367 = 819:

գ) Չկա այդպիսի թիվ, որովհետև 367–ից որևէ թիվ հանելիս պետք է արդյունքը պակաս ստացվի:

դ) Չկա այդպիսի թիվ, որովհետև 367–ից որևէ թիվ հանելիս պետք է արդյունքը 367 –ից պակաս կամ հավասար ստացվի:

3.1. Պատասխանները կարդալ տրված հարցերի հերթականությամբ.

ա) Ինչի՞ է հավասար x-ը, եթե 42687 • x = 0:

բ) Նշել x-ի արժեքը, եթե 42687 • x = 0: 3879 • x = 3879:

գ) 32 • x = 64 հավասարման x-ի արժեքը:

դ) Ինչի՞ է հավասար x-ը, եթե 0 • x = 2:

Պատասխաններ.

1. Գոյություն չունի:
2. 0:
3. 1:
4. 2:

3. 2. Պատասխանները կարդալ տրված հարցերի հերթականությամբ.

ա) Եթե քառակուսու կողմը 25 է, ապա մակերեսը կլինի ...

բ) Եթե ուղղանկյան երկարությունն է 12, իսկ լայնությունը՝ 7, ապա մակերեսը կլինի ...

գ) Եթե բեկյալի օղակներն են՝ 64, 43 և 89, ապա բեկյալի երկարությունը կլինի ...

դ) Եթե հավասարակողմ եռանկյան կողմի երկարությունն է 43, ապա պարագիծը կլինի ...

Պատասխաններ՝ 196, 625, 129, 84:

4. 1. Լրացնել բաց թողած մասերը.

Անհայտ հանելին գտնելու համար............տարբերությունը, իսկ անհայտ բաժանարարը գտնելու համար բաժանարարը..............:



A.R.A.R.@

4.2. 1996 թվականի փետրվար ամիսն ունեցել է 29 օր, որովհետև 96–ը բաժանվում է......-ի վրա: Այդ թվականին տարին ունեցել է ......օր:

5.1. Հետևյալ շարադրանքում գտնել պակասող «նյութը»:

Բեկյալի օղակները (հատվածները) չպետք է պատկանեն միևնույն ուղղին:

(Պատասխան՝ հարևան օղակները):

5.2. Հետևյալ շարադրանքում գտնել ավելորդ «նյութը»:

Գտնել այն ուղղանկյան մակերեսը, որի երկարությունն է 62 սմ, լայնությունը՝ 31 սմ, իսկ պարագիծը՝ 186 սմ:

(Պատասխան՝ երկարության, լայնության կամ պարագծի տվյալներից որևէ մեկը):

6.1. Որոշել սխալ օգտագործված բառը կամ բառակապակցությունը: Գումարի տեղափոխական հատկությունն է՝ գումարելիների տեղափոխությունից գումարը չի փոխվում:

(Պատասխան՝ գումարը փոխարինել «գումարելիներ» բառով):

6.2. Որոշել սխալ օգտագործված բառը կամ բառակապակցությունը:

(647 + 518) • 64 – ը թվաբանական արտահայտություն է, 36 • 24 - 68 = 864–ը հավասարություն, իսկ 648 - x = 317 –ը՝ անհայտ :

(Անհայտ՝ հավասարում):

7.1. Լուծման ցուցումներից ընտրել լուծման «մեխը»:

Առաջադրանք: Քանի՞ անգամ 5 թվանշանը կօգտագործվի, եթե գրենք 1 – 100 բոլոր թվերը:

Ցուցումներ՝ ա) Գրել 1–100 բոլոր թվերը և հաշվել 5 թվանշանների քանակը:

բ) Յուրաքանչյուր տասնյակում մեկ 5 թվանշանը կա: Հետևաբար՝ պետք է հաշվել 5 թվանշանների քանակը:

գ) Բացի տասնյակների 5 թվանշաններից՝ հաշվել նաև 50-59-ի 5 թվանշանների թիվը:

7.2. Լուծման ցուցումներից ընտրել արդյունավետ լուծում հուշողը:

Առաջադրանք: Հաշվել 1 – 200 բոլոր թվերի գումարը:

Ցուցումներ՝ ա) Հաշվել յուրաքանչյուր տասնյակի թվերի գումարը և արդյունքները գումարել:



digitised by

բ) Նկատի ունենալ, որ 1 + 200 = 201, 2 + 199 = 201, 3 + 198 = 201, ...և կստացվի ընդամենը 100 գումարելի:

գ) Հաշվել տասնյակների գումարը, 1-երի գումարը, 2-ների գումարը .... և արդյունքները գումարել:

Այժմ կազմենք երկու թեմատիկ տեստերի նմուշներ, որոնք կազմված են այս կամ այն սկզբունքով կամ սկզբունքների համակարգ են ներկայացնում:

## Տեստ

*Թեմա՝* Ուղղանկյան մակերեսը

1. Նշված մեծություններից ո՞րն է մակերեսի չափման միավոր.

ա) 1 սմ, բ) 1 քառ. սմ, գ) 1 կգ, դ) քառակուսին:

2. Եթե 1 մ =100 սմ, ապա քանի՞ քառ. սմ կլինի 1 քառ. մ-ը.

ա) 100, բ) 1000, գ) 10000, դ) 100000:

3. Եթե գծային մի չափը մյուսից մեծ է 1000 անգամ, ապա այդ չափերով կառուցված քառակուսիներից մեկի մակերեսը մյուսի մակերեսից քանի՞ անգամ մեծ կլինի.

ա) 4 · 000 անգամ:

բ) 1000 անգամ:

գ) 1000000 անգամ:

4. Եթե երկու ուղղանկյունների պարագծերը հավասար են, ապա դրանց մակերեսները անպայման հավասա՞ր կլինեն.

ա) Այո՛: բ) Ոչ՛:

5. Քառակուսու կողմը 15 սմ է: Որքա՞ն կլինի մակերեսը.

ա) 60 սմ, բ) 225 սմ, գ) 225 քառ. սմ:

6. Ուղղանկյան կողմերն են 36 սմ և 22 սմ: Որքա՞ն կլինի մակերեսը.

ա) $36 \cdot 2 + 22 \cdot 2 = 72 + 44 = 116$ սմ:

բ) $(36 + 22) \cdot 2 = 58 \cdot 2 = 116$ սմ:

գ) 36 սմ · 22 սմ = 792 քառ. սմ:

դ) $36 \cdot 22 = 792$ քառ. սմ:

7. Լրացնել բաց թողած մասերը.



A.R.A.R.@

Ուղղանկյան մակերեսը հավասար է.............

8. Մեկ հեկտարի և 1 արի միջև ի՞նչ առնչություն կա.

ա) 1 հա = 100 ար, բ) 1 հա = 10 ար, գ) 1հա = 10000 ար:

## Տեստ

*Թեման՝* Շարժման վերաբերյալ խնդիրներ

1. Հերթականությամբ նշված են ճանապարհի, ժամանակի և արագության միավորները.

ա) ժամ, կմ, կմ/ժամ:

բ) Կմ, ժամ, կմ/ժամ:

գ) Կմ/ժամ, ժամ, կմ:

2. Նշվածներից ո՞րն է արագության միավոր.

ա) մ/վրկ, բ) րոպե, գ) մ:

3. Արագության 72 կմ/ժամ արժեքն արտահայտել մ/վրկ –ով.

ա) 72 կմ/ժամ = 72 • 1000 : 360 մ/վրկ = 200 մ/վրկ:

բ) 72 կմ/ժամ = 72 • 1000 : 3600 մ/վրկ = 20 մ/վրկ:

գ) 72 կմ/ժամ = 72 • 1000 : 3600 մ/վրկ = 259200000 մ/վրկ:

4. Արագության արժեքն ստանալու համար պետք է ճանապարհի արժեքը .... ժամանակի արժեքին:

5. Տառային արտահայտությունները գրել՝ ըստ անվանումների հերթականության.

| | |
|---|---|
| ա) V | ա) ճանապարհ |
| բ) S | բ) ժամանակ |
| գ) t | գ) արագություն |

6. Երկու վայրերից, որոնց միջև եղած հեռավորությունը 120 կմ է, միաժամանակ միմյանց հանդեպ դուրս եկան երկու հեծանվորդներ: Որքա՞ն ժամանակից հետո նրանք կհանդիպեն, եթե հեծանվորդների արագությունները են՝ 17 կմ/ժամ և 13 կմ/ժամ.

ա) 4 ժամ, բ) 36 ժամ, գ) 8 ժամ:

7. Ո՞րն է ճիշտ նշված բանաձևը.

ա) $S = V \cdot t$ բ) $V = \frac{t}{s}$ գ) $t = \frac{v}{s}$



digitised by

Ներկայացնենք բաց թողած մասերով տեստի մեկ օրինակ:

*Խնդիր:* Երկու քաղաքների միջև եղած հեռավորությունը 180 կմ է: Միմյանց հանդեպ շարժվող հեծանվորդների արագությունները են՝ 11 կմ/ժամ և 9 կմ/ժամ: Հեծանվորդների կողմից շարժումն սկսելու պահից աղավնին թռչում էր մեկից մյուս կողմն այնքան ժամանակ, մինչև հեծանվորդները կհանդիպեին: Քանի՞ կմ անցավ աղավնին, եթե նրա արագությունը 15 կմ/ժամ է:

*Լուծում:* Յուրաքանչյուր ժամում երկու աղավնիները միասին կանցնեն.....կմ: Եթե յուրաքանչյուր ժամում միասին անցնում են .....կմ, ապա 180 կմ անցնելու համար անհրաժեշտ կլինի .....ժամ, որը կստացվի, եթե 180 կմ-ը ......20 կմ-ի վրա: Աղավնու թռիչքը տևել է .....ժամ:

Եթե աղավնին ....ժամում թռել է....կմ/ժամ արագությամբ, ապա այն ընդամենը թռել է....կմ:

*Պատասխան՝* 135 կմ:

Տեստերն ինքնուրույն, անհատական և շերտավորված աշխատանք կազմակերպելու լավագույն միջոցներ են:

Դրանք կարող են օգտագործվել որպես ուսուցման կամ ստուգման միջոց:

*Ռուբեն Սարգսյան*

ԿԲԿ գլխավոր մասնագետ,
«Էլիտա» հեղինակային դպրոցի հիմնադիր





A.R.A.R.@

# Հանելուկները և դրանց դերը դպրոցականների կյանքում

Հանելուկը ժողովրդական բանահյուսության վիպական սեռին պատկանող հին ժանրատեսակներից է: Այն ունեցել է մի քանի անվանումներ՝ առակ, հանք, պընգըլ, ճեռոք և այլն: Հանելուկի արտաքին պատկերի ու ներքին նշանակության միջև գոյություն ունի զգալի տարբերություն: Այդ պատճառով էլ հանելուկն ասելիս նրա պատասխանը կամ լուծման առարկան անմիջապես չի ենթադրվում, այլ դեռևս կարիք ունի գուշակման և հաճախ էլ մնում է չգուշակված:

Հանելուկը մեկ կամ մի քանի առարկայի այլաբանական պատկեր է՝ արտահայտված բոլորովին ուրիշ առարկաներով կամ երևույթներով: Այդ առարկաների, երևույթների հատկանիշները գաղտնագրված են: Դրանց իմաստը պետք է «հանել», գտնել, գուշակել: Հանելուկը արձակ կամ չափածո, մեկ կամ մի քանի տողերից բաղկացած գեղեցիկ պատկեր է, որն «Ի՞նչն է», «Այն ի՞նչն է, ի՞նչը», «Ի՞նչն է, որ» հարցերով մի անձն առաջադրում է մյուսին: Այն կազմված է երկու բաղադրիչներից՝ բանաձևից և լուծման առարկայից: Բանաձևերը երկու կամ ավելի անդամից բաղկացած արձակ կամ չափածո փոխաբերություններ են, որոնք վերարտադրում են լուծման առարկայի մեկ կամ մի քանի հատկանիշներ:

Ունկնդրին առաջադրվում են բանաձևերը: Հանելուկ լուծողը պետք է գուշակի դրանց տակ թաքնված առարկան:

Հանելուկի պատկեր-բանաձևը ձևավորվում է առարկայական իրականության այնպիսի գծերից և երևույթներից, որոնց ընդհանուր կերպարը հաճախ հեռու է հանելուկի լուծման առարկայի իրական պատկերացումը լինելուց: Այն միայն հեռվից հեռու ակնարկում է տվյալ առարկայի ինչ-որ հատկանիշներ: Նման դեպքերում հանելուկի լուծման առարկայի և նրա պատկեր-բանաձևի միջև առաջանում է զգալի խզում, որով և դժվարանում է հանելուկի գուշակումը: Եվ այդ հանգամանքն էլ կազմում է հանելուկի բուն էությունը: Դրա նպատակն է՝ իրական առարկաները կամ երևույթները քողարկել, դիմակավորել այնպիսի պատկերներով, որոնք ենթադրեն գուշակման դժվարություններ: Հանելուկի ժանրային առանձնահատկություններն էլ հենց դրսևորվում են այս հանելուկային պատկերավոր հարցերի գուշակմամբ: Դրանով էլ հանելուկն առնչվում է մանկավարժությանը – դառնում երեխաների մտավոր ունակությունները, տրամաբանական մտածողությունը, հատկապես սրամտությունը փորձելու և զարգացնելու լավագույն միջոց:



digitised by

Բնության գաղտնիքները բացահայտելու համար մարդիկ ձգտել են մարզել ու զարգացնել իրենց միտքը: Այս նույն նպատակով էլ դեռ շատ վաղուց հանելուկներ են առաջադրվել նաև մանուկներին: Չէ՞ որ հանելուկը որևէ առարկայի կամ երևույթի թեկուզ ոչ լրիվ, բայց ճշգրիտ նկարագրությունն է:

Հանելուկները կյանքում ունեցել են գործնական կիրառություն: Դրանք այսօր էլ հանդես են գալիս որպես մտավոր ունակությունները զարգացնող, բանականությունը մարզող մտախաղեր: Գործնական կիրառության բերումով էլ հանելուկն ընդունում է դրսևորման զանազան ձևեր: Հանելուկի ամենապարզ ու նախնական ձևը հարցն է, որն անպայման ենթադրում է որոշակի պատասխան:

Օրինակ՝

Ի՞նչ է զարդարվում
Տարվա մեջ մի օր,
Թեև աշխարհում
Չարդ է փառավոր:

/եղևնի/

Այն ի՞նչ է, ի՞նչը,
Գիշերն է թռչում
Եվ ճանճով սնվում:

/չղջիկ/

Հանելուկներն օգտագործվել են իբրև մարդկանց մտավոր ունակություններն ու հասունությունը փորձելու կարևոր միջոցներ: Այդ է վկայում, օրինակ, տարբեր ժողովուրդների մեջ հարատևող այն սովորույթը, երբ ամուսնությունից առաջ հարսնացուն կամ փեսացուն հանելուկներով փորձում են միմյանց մտավոր ունակությունները, և փեսացուն իրավունք է ստանում հարսնացուի կողքին նստելու՝ նրա առաջարկած հանելուկները լուծելուց հետո միայն: Այդ սովորույթի մասին վկայություններ են պահպանվել նաև հրաշապատում հեքիաթներում, երբ փեսացուն, նախքան ամուսնանալը, պարտավոր էր լուծել հարսնացուի, երբեմն էլ նրա հոր կողմից առաջարկված հանելուկները կամ կատարել դժվար իրագործելի պայմանները:

Հանելուկ գուշակելու խմբակային սովորույթը և մոգականության աննշան հետքեր որոշ ժողովուրդների մոտ պահպանվել են մինչ մեր օրերը: Նոր շրջանում պահպանված հնի վերապրուկներից են հանելուկների կենցաղավարումը սահմանափակող որոշ արգելքները. չի թույլատրվել հանելուկներ գուշակել ցերեկը, ամռան կամ պաս օրերին: Ըստ հավատալիքի՝ հիշյալ սովորույթի խախտման դեպքում կովերն այլևս արոտից տուն չեն դառնա, կմոլորվեն անտառում կամ գայլերի բաժին կդառնան: Նման հավատալիքի վերապրուկներ են նաև «Գիշերով հանելուկ չեն ըսե՝ կը քյասիբենան» կամ «Հանելուկ մի ըսե, թանկութեն կըլլի» հայկական ասացվածքները: Մինչև անցյալ դարի երկրորդ կեսը հայկական գեղջկական միջավայրին ևս հատուկ է եղել հանելուկների խմբակային գուշակման ժամանցային սովորույթը. մեկն առաջարկել է հանելուկներ, իսկ



A.R.A.R.@

մնացածներն աշխատել են գուշակել դրանք՝ նախապես հարցնելով լուծման առարկայի սեռը կամ տեսակը:

Հանելուկի կենցաղավարման մի այլ եղանակի մասին վկայություններ են պահպանել բանահյուսական հնամյա ստեղծագործությունները: Համաձայն դրանց՝ հանելուկը ծառայել է որպես երկու անձնավորությունների միջև մղվող մրցախաղ, մտավոր մի յուրօրինակ մենամարտ, երբ պարտվողը դիմացինի հաղթանակը փոխհատուցել է սեփական կյանքով:

Առասպելական զրույցներում և հեքիաթներում պատմվում է այնպիսի հրեշների մասին, որոնք հերոսներին ամենախրթին հանելուկներ են առաջարկում և չլուծելու դեպքում՝ կործանում նրանց:

Ըստ հին հունական հանրահայտ առասպելի՝ թևավոր առյուծի մարմնով և կանացի գլխով հրեշը՝ Սֆինքսը, հանելուկ էր առաջարկում անցորդներին և, քանի որ ոչ ոք չէր կարողանում լուծել, բոլորին անխտիր սպանում էր: Գալիս է Թեբեի արքա Էդիպոսը: Սֆինքսն առաջարկում է հետևյալ հանելուկը. «Ո՞վ է, որ առավոտյան չորս ոտքի վրա է, կեսօրին՝ երկու, երեկոյան՝ երեք»: Էդիպոսը պատասխանում է. «Մարդն է՝ երեխա ժամանակ չորեքթաթ տվող, երիտասարդ ժամանակ զույգ ոտքով քայլող, ծերացած հասակում ձեռնափայտով շարժվող»: Պարտված Սֆինքսը ժայռից անդունդն է գլորվում և կործանվում:

Երկու անձնավորությունների միջև հանելուկներով մղվող մրցախաղը փոխհատուցման իր ձևերով հանդես է եկել նաև ուշ շրջանի ժողովրդական երգիչների կենցաղում: Հատկապես աշուղների հանելուկներով մրցահանդեսներին բնորոշ է եղել պարտվողի բարոյական փոխհատուցումը, որը մեծ մասամբ արտահայտվել է հաղթողին սեփական նվագարանի՝ սազի հրապարակային հանձնման արարողությամբ:

Բոլոր դեպքերում էլ հանելուկները ծառայել են մարդկային խելքն ու հնարամտությունը փորձելու նպատակին:

Տակավին խոր հնադարում առաջ են եկել հանելուկի նորանոր տեսակներ, որոնք առնչվել են զարգացող գիտություններին և իրենց նկարագրով ծառայել դրանց պահանջներին: Դրանք թվերի և գծերի պատկերավոր խորհրդանիշերի վրա կառուցված հանելուկներն էին, որոնց առավել զարգացած տեսակներից են՝ թվահանելուկը, գծահանելուկը, թվաբանական խնդիրը: Հանելուկի հիշյալ տեսակները հետագայում կիրառություն են գտել մաթեմատիկական գիտությունների մեջ՝ վարժությունների և խնդիրների տեսքով: Դրանք բոլորն էլ կազմված են դասական հանելուկի՝ հարց-հանելուկի սկզբունքներով, միայն թե գիտական-մաթեմատիկական կերպարանք են ընդունել: Այսինքն՝ նախօրոք հայտնի պատասխանի հիման վրա կառուցվում էին իրականությունից վերցված մարդկային-հասարակական կամ բնական երևույթների պատկերավոր փոխհարաբերություններ: Դրանք որոշակի թվական ու թվաբա-



digitised by

նական հարաբերություններով /թվաբանական խնդիրների դեպքում/, թվային ու գծային խորհրդանիշերով /թվաբանական վարժությունների և գծագրական խնդիրների դեպքում/ կամ այդ երկուսի համադրական մաթեմատիկական հարաբերություններով /երկրաչափական խնդիրների դեպքում/ արտահայտում էին որոշակի իրադրություն, որը հարցումով ներկայացվում էր լուծման: Այլ կերպ՝ մի քանի հայտնի տվյալներով առաջադրվում էր որոշակի պատկերավոր իրադրություն, որով և պետք է գուշակվեր հարցումով պահանջվող անհայտը:

Վաղ շրջանի հանելուկների մի քանի տեսակների և դրանց գործնական տարբեր կիրառումներն արդեն սկզբից ևեթ կանխորոշում են զարգացման հեռանկարները: Եթե թվային և գծային հանելուկներն ու խնդիրներն իրենց գիտական ու գործնական կիրառության շնորհիվ հետզհետե բարդանում են, կատարելագործվում, գիտական ձև ու տեսք ընդունում և իրենց կազմակերման ու լուծման հարատև ընթացքով անկարագրելի բարձրության հասցնում մաթեմատիկական գիտությունները, ապա հանելուկի նախնական տեսակը՝ հարց-հանելուկը, կյանքի ու գիտելիքների զարգացման հետ միաժամանակ աստիճանաբար կորցնում է իր երբեմնի գործնական-ճանաչողական, փորձնական մեծ արժեքն ու նշանակությունը: Նախկինում հարափոփոխ ու մշտանորոգ հանելուկներն աստիճանաբար վերածվում են քարացած բանաձևերի, ավանդական արժեք ու նկարագիր ստանում և սերնդից սերունդ փոխանցվելով՝ դառնում ժամանցային զվարճալի մտախաղի առարկաներ:

Ժամանակի հոլովումներին զուգընթաց ժողովուրդների մանկության շրջանում աշխարհաճանաչողական արժեք ներկայացնող հանելուկները հետագայում զրկվում են իրենց վաղեմի հասարակական լուրջ բնույթից՝ վերածվելով ժամանցի սրամիտ առարկաների: Իսկ նոր ժամանակներում հանելուկներն ամբողջապես անցնում են մանուկների տնօրինությանը: Նրանք նոր են աչք բացում շրջապատող աշխարհի վրա, նոր են կյանք մտնում ու ճանաչում այն: Մանուկների մտածողությունն ու աշխարհայացքը համընկնում են իրենց նախահայրերի հասարակական մանկության պատկերացումներին:

Հանելուկների հասարակական դերի ու միջավայրի նման փոփոխության պայմաններում ևս շարունակվում են հորինվել նորերը, որոնք ոչ թե նախորդների նման խտացնում են ժողովրդական հին ըմբռնումներ ու պատկերացումներ, այլ արտահայտում են առավելապես շրջապատի առարկաների և երևույթների պարզ ընկալումներն ու մանկական աշխարհայացքը:

Հանելուկների ներթափանցումը գեղարվեստական գրականության մեջ սկսվել է դեռ շատ վաղուց: Տարբեր բովանդակությամբ հանելուկներ են գրել հայ գրողներն ու բանաստեղծները: Այս առումով նշանակալից են Անանիա Շիրակացու կազմած «Խրախճանականք» կոչ-

104-2003
ՀԱԱՄ



A.R.A.R.@

վող թվաբանական խնդիր-հանելուկները, ինչպես նաև կրոնական բովանդակությամբ երկու տասնյակի չափ բուն հանելուկները: 12-րդ դարի բանաստեղծ, երաժիշտ և հասարակական գործիչ Ներսես Շնորհալին ստեղծել է աշխարհիկ բովանդակությամբ հարյուրավոր գողտրիկ հանելուկներ՝ նվիրված ամենատարբեր առարկաների ու երևույթների: Մեր օրերում հանելուկներ են հորինում մանկագիրները:

Հատկապես կրտսեր դպրոցականները չափազանց տպավորվող, զգայուն էակներ են: Ուսուցման առաջին տարիներին, նրանց հետ աշխատելիս, պետք է կարևորել հետաքրքրականություն, ոգևորություն, մրցակցություն, բուռն հույզեր – զգացումներ առաջացնող պահերը: Այս առումով ուսուցման համակարգում ուշադրություն պետք է հատկացնել խաղերի օգտագործմանը: Ուսուցման արդյունավետությանը նպաստող խաղեր կարելի է կազմակերպել հանելուկների և խաղային իրադրությունների ստեղծման ճանապարհով: Հանելուկների առաջադրումն ինքնին աշխուժացնում է, թարմացնում երեխաներին, օժանդակում նրանց տրամաբանական և պատկերավոր մտածողության, երևակայության, կռահելու ունակությունների զարգացմանը: Խաղերի ընթացքում դրանց օգտագործումը դասապրոցեսը դարձնում է առավել հետաքրքիր, ապահովում բոլոր երեխաների ուշադրության կենտրոնացումը և ծառայում ուսուցչի հիմնական նպատակին: Այն է՝ առանց հարկադրանքի, ձանձրույթ կամ հոգնություն պատճառելու սաների դաստիարակում, գիտելիքների հաղորդում:

Հանելուկներով աշխատանքներ կազմակերպելու հնարավորություն առկա է յուրաքանչյուր դասի ընթացքում: Սակայն անհրաժեշտ է պահպանել չափավորության զգացումը:

Այբբենական կարգով հանելուկքառյակներ կարելի է օգտագործել հատկապես լեզուների ուսուցման գրաճանաչության շրջանում, արտադասարանային ընթերցանության պարապմունքների, հանդեսների, ցերեկույթների և այլ միջոցառումների անցկացման ժամանակ: Այդ կերպ աշխուժություն է տիրում, երեխաները թարմանում են, զարգանում են նրանց աշխարհաճանաչողությունը, հնարամտությունը, հարստանում երևակայությունն ու գիտելիքները: Հանելուկներն օգնում են խորամուխ լինել առարկայի, երևույթի էական հատկանիշների, բուն էության, առանձնահատուկ գծերի մեջ: Դրանով երեխաները ձևավորվում են որպես դիտողունակ, ուշադիր, սրամիտ ու գործուն մտքի տեր մարդիկ:

Եթե դասապրոցեսում հիմնական թեմայի ուսուցման շրջանակներում հանելուկները հանդես են գալիս որպես լրացուցիչ նյութ, ապա արտադասարանային ընթերցանության պարապմունքներին դրանք կարող են օգտագործվել նաև որպես հիմնական ուսուցանվող թեմա:

Հատկապես կրտսեր դպրոցի դասագրքերում ընդգրկված են դասա-



digitised by

նյութեր, որոնց տակ զետեղված են տվյալ տեքստի առարկաներն ու երևույթները պարզաբանող հարցհանելուկներ:

Չպետք է բավարարվել առաջադրված հանելուկներով միայն: Երեխաներին պետք է հրամցնել և նրանցից պահանջել նմանատիպ նոր հանելուկներ՝ օգտվելով ժամանակակից մանկագիրների ստեղծագործություններից: Դրա անհրաժեշտությունը կա հատկապես արտադասարանային պարապմունքների անցկացման ժամանակ:

Մարդն առաջվա պես շրջապատված է բնության մեծագույն առեղծվածներով: Եվ դրանք ամենից ավելի հեշտությամբ ու սրամտորեն կլուծի նա, ով մանկուց վարժվում է չընկրկել հանելուկներից եւ գտնել դրանց պատասխանները:

*Գրետա Գրիգորյան*

ԼՂՀ, Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ

## ԳՈՒՅՆԸ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Դպրոցական կրթության արդյունավետության, մասնավորապես երեխաների ինքնուրույնության, ստեղծագործական ակտիվության խթանումն ապահովելու տեսանկյունից ուսուցիչները պետք է տիրապետեն բազմաբնույթ հմտությունների: Սակայն այս բնագավառում առկա են մի շարք դրույթներ ու մոտեցումներ, որոնք պայմանավորված չեն միայն ուսուցչի դերով: Ուզում ենք առանձնացնել երեխային շրջապատող միջավայրի գունային ձևավորումների խնդիրը:

Գույնի կամ գունատեսության մասին գիտությունը ուսումնասիրել է մարդկությանը հուզող բազմաթիվ հարցեր: Սակայն գունատեսությունը՝ որպես ինքնուրույն բնագավառ գիտությունների համակարգում, առանձնացվեց միայն 19-րդ դարում: Գույնի հատկությունների լուսաբանմանն անդրադարձել են գիտության ու արվեստի խոշոր գործիչներ Լեոնարդո դա Վինչին, Դյուրերը, Լոմոնոսովը, Հելմհոլցը, Գյոթեն, Նյուտոնը և այլք:

Գույնը արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու հզոր միջոց է: Որքա՜ն աղքատ կլիներ մարդու հուզական աշխարհը, մշակույթի ինչպիսի՜



A.R.A.R.@

գլուխգործոցներ չէին ծնվի, եթե մեզ շրջապատող առարկաները լինեին գորշ ու միապաղաղ:

Տեսողական զգայարանի միջոցով գույնի ընկալումը հոդաբաշխ լեզվի հետ միասին մարդու մեջ ձևավորում են բազմաբնույթ պատկերացումներ, տրամադրություններ, գործունեության տարբեր եղանակներ:

Պատմական յուրաքանչյուր ժամանակահատվածում գույնը՝ որպես արտահայտչականության միջոց, իր ուրույն տեղն է գրավել հասարակական գործունեության տարբեր բնագավառներում: Այն իր կիրառական նշանակությունը չի կորցրել նաև մեր ժամանակներում: Դիզայնի միջոցով գույնը մուտք է գործել արտադրություն, կենցաղ և իր անմիջական ներգործությամբ նպաստում է աճող սերնդի գեղագիտական ապրումների ու ընկալումների ձևավորմանն ու զարգացմանը:

Հայտնի ճշմարտություն է, որ մարդու մտածողությունը բազմաբնույթ է. այն կարող է շրջապատող իրականությունն ընկալել գույների, ձայների, գծերի և այլնի միջոցով: Կրտսեր դպրոցական տարիքում մասնավորապես գերիշխում է գունային ընկալումներով դրսևորվող մտածողությունը: Այդ իսկ պատճառով այս տարիքում պիտի զարգացնել գունային զգացողությունը:

Դպրոցում երեխաների մեջ գույների նկատմամբ ճաշակի պատվաստումը պետք է իրականացնել ոչ թե բուն դասաժամերին (որը հետագայի գործ է), այլ մինչ այդ՝ հենց դպրոց մտնելիս: Իսկ դա ենթադրում է՝ դպրոցական շենքերի ներքին և արտաքին հարդարումների, միջանցքների, դասարանների և այլ սենյակների ճաշակով և գիտականորեն հիմնավորված գունային ձևավորումներ: Սա ոչ թե երկրորդական, այլ հենց մեր կողմից քննարկվող հարցի տեսանկյունից շատ կարևոր խնդիր է:

Տարիներ առաջ /նույնիսկ մեր օրերում/ դպրոցական դասասենյակների պատերը ներկում էին սպիտակ գույնով, նստարանները՝ կանաչ, գրատախտակը՝ սև: Նման միջավայրը ոչ միայն անդուր տպավորություն է գործում, այլև բացասաբար է անդրադառնում ուսուցման ամբողջ գործընթացի վրա: Երևանի մի քանի դպրոցների տարրական դասարաններում մեր կողմից կատարված ուսումնասիրությունները բացահայտեցին երեխաների հոգեբանական բնութագրերի և գույների միջև գոյություն ունեցող հետևյալ կապերը.



digitised by

| Տարիքը | Գերադասելի գույնը | Անհրապույր տպավորություն թողնող գույնը | Հոգեբանական վիճակը |
|---|---|---|---|
| 7-9 | կարմիր վարդագույն | սև, շագանակագույն | հեքիաթների աշխարհ տեղափոխվելու զգացողություն |

Աղյուսակից երևում է, որ կրտսեր դասարաններում երեխաները մեծ ակտիվություն են ցուցաբերում տաք գույների նկատմամբ /տղաները՝ կարմրի, իսկ աղջիկները՝ վարդագույնի/:

Ճիշտ չի լինի այս ամենն ընդունել բացարձակորեն: Սակայն անվիճելի է, որ երեխայի համար և հատկապես շրջապատող միջավայրի նկատմամբ նրա վերաբերմունքի դրսևորման առումով գույնը՝ խաղում է մեծ դեր:

Կրտսեր դպրոցականներին տրամադրվող մասնաշենքերը կահավորելիս պետք է խուսափել անհրապույր, գորշ գույներից, նույնիսկ այնպիսի դեպքերում, երբ դրանք համարվում են «համեստ տոն»:

Երբ կարմիր գույնն օգտագործվում է կրտսեր դպրոցի դասասենյակները ձևավորելու համար, ապա կարելի է համոզված լինել, որ այն երեխաների վրա հանգստացնող ներգործություն է ունենում: Երեխաները սիրած գույնի առկայության պայմաններում իրենց զգում են ինքնավստահ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաներին հատկացվող սենյակները ձևավորելու համար գույնի ընտրությունը պետք է կատարել՝ ելնելով նրանց տարիքային առանձնահատկություններից և այս կամ այն գույնի նկատմամբ ունեցած նախասիրությունից: Թե ինչպե՛ս և որտե՛ղ կօգտագործվի ձևավորման մեջ այդ «բնորոշիչ» գույնը, ապա դա արդեն գործի նկատմամբ գեղարվեստական մոտեցման և ճաշակի դրսևորում է:

Անհրաժեշտ է հնարավորության դեպքում խուսափել գրատախտակի համար սև գույն օգտագործելուց: Ավելին, ցանկալի է, որ դա լինի մուգ կանաչ կամ մուգ կապույտ: Այն պատին, ուր կախված է գրատախտակը, խորհուրդ չի տրվում ստեղծել սուր գունային համադրություն, որպեսզի չշեղվի սովորողների ուշադրությունը: Դասարանի դիմացի պատը պետք է ներկվի համեմատաբար ավելի չեզոք և հանգիստ գույնով: Տարրական դասարաններում ձևավորումներ կատարելիս կարելի է օգտագործել հագեցված մաքուր կարմիր տոն: Երկրորդ դասարանում կարմիր գույնն աստիճանաբար կարելի է փոխարինել կարմիր-նարնջագույնով: Հաջորդ դասարան-



A.R.A.R.@

ներում նարնջագույնը հետզհետե պետք է փոխարինվի դեղինով:

Այն դասասենյակներում, որոնցում երեխաներն զբաղվում են ձեռքի աշխատանքով, նախընտրելի է կապույտ գույնը: Վերջինս կարելի է օգտագործել նաև երգ-երաժշտության դասասենյակները ձևավորելու ժամանակ: Սպորտային դահլիճներում հաճելի տպավորություն է թողնում կապույտի և լուսավոր կանաչի համադրությունը:

Դպրոցների միջանցքները և տարբեր միջոցառումների համար նախատեսված դահլիճները պետք է առաջացնեն լայնարձակ տարածության զգացողություն: Դրանք, ինչպես նաև աստիճանների պատերը, կարող են ներկված լինել լուսավոր կապույտով և դեղինով: Այս միջավայրում երեխաներն իրենց կզգան հանգիստ վիճակում:

Դպրոցական շենքերին հարկավոր են մաքուր և հստակ գունային տոներ: Կենդանի և ուրախ գույներով ձևավորված դպրոցներում ուսումնական գործընթացն ընթանում է ավելի մատչելի ու ստեղծագործական մթնոլորտում:

Հաշվի առնելով աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները՝ մեծ ուշադրություն պետք է դարձնել հատկապես կրտսեր դպրոցի դասագրքերի նկարազարդումներին: Կրտսեր տարիքային խմբերի դասագրքերի գունային ձևավորումներն իրենց ծավալով համեմատաբար ավելի մեծ տեղ պետք է գրավեն, քան տեքստերը: Նկարազարդումների գույների ճիշտ ընտրությունը ոչ միայն կզարգացնի գեղագիտական ճաշակը, այլև կնպաստի գեղարվեստական ստեղծագործության հուզական ընկալմանը: Դա կարելի է բացատրել երեխաների հարուստ ներաշխարհի առկայությամբ և ակտիվ ճանաչողական գործունեությամբ: Սակայն հուզական ներուժը դեռևս բավարար չէ աշակերտների ստեղծագործական ակտիվության համար: Այն պետք է բացահայտել և զարգացնել:

*ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

*Մանկ. գիտ. թեկնածու*



digitised by

# Ձեր երեխան դպրոց է գնալու



Մեծանում է ձեր փոքրիկը և «կանգնում» դպրոցի շեմին: Փորձում եք գրել, կարդալ, հաշվել սովորեցնել նրան: Սակայն դպրոցին նախապատրաստված լինել նշանակում է ոչ միայն որոշակի գիտելիքներ ունենալ, այլև կանխորոշել երեխայի ներքին տրամադրվածությունը, հուզական, մտավոր որակները, վերլուծիչների զարգացման աստիճանը:

Արդյո՞ք ձեր երեխան ցանկանում է դպրոց գնալ: Դպրոց գնալու ակտիվ դիրքորոշում ունեն մանկապարտեզ հաճախած և ինչ-որ չափով նաև բազմանդամ ընտանիքների երեխաները: Ավագ քույրը կամ ավագ դպրոցական եղբայրը կարող են խթանել փոքրիկի՝ դպրոց գնալու ցանկությունը: Պետք չէ սակայն նույնացնել դպրոց գնալու և սովորելու ցանկությունները: Հաճախ երեխան ցանկանում է դպրոց գնալ, որովհետև հարևանի երեխան նույնպես գնում է: Ինքն էլ է ուզում պայուսակ բռնել, նվերներ ստանալ, և ընտանիքում իր մասին էլ խոսեն ոգևորությամբ: Դպրոցը նրան գրավում է որպես նորույթ: Նման կողմնորոշման ձևավորումը բնորոշ է գրեթե բոլոր 6-7 տարեկան երեխաներին: Հարկավոր է ամենատարբեր առիթներով երեխաներին բացատրել, թե իրապես ի՞նչ է նշանակում դպրոցական լինել, ի՞նչ պարտականություններ և իրավունքներ ունի նա:

Երեխայի՝ դպրոցին նախապատրաստումը ունի երկու ուղղություն՝ հատուկ և ընդհանուր:

Հատուկ նախապատրաստումը խոսքի զարգացման, մաթեմատիկայի, կերպարվեստի, երաժշտության, ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ ունակությունների, հմտությունների ձեռքբերումն է, որով կապահովվի ուսուցումն առաջին դասարանում:

Ընդհանուր նախապատրաստումը ենթադրում է հոգեբանական, ֆիզիկական, բարոյակամային ուղղվածություն:

Դպրոցին պատրաստ լինել նշանակում է ունենալ կազմակերպված վարք, հմտություններ, գիտելիքների որոշակի պաշար և հոգեբանական տրամադրվածություն: Երեխան պետք է ֆիզիկապես նույնպես պատրաստ լինի կյանքի փոփոխությանը, ունենա ամուր առողջություն, աշխատունակություն, համբերություն: Այդ պատճառով ծնողները պետք է հոգ տանեն բացօթյա, ինտելեկտուալ, հոգեբանամանկավարժական խաղերի, զրույցների, բառախաղերի, գլուխկոտրուկների, մտավարժանքների կազմակերպման ուղղությամբ: Այդ նպատակով կարելի է՝



A.R.A.R.@

- առաջարկել թվել հայկական լեռների կամ լեռնաշղթաների, մարզերի, լճերի, քաղաքների և մարդկանց անուններ,
- բառի վերջին տառով կազմել նոր բառեր,
- բառախաղ՝ օրինակ, «Սևանա լիճ» թեմայով,
- խաչբառ,
- նկարի՛ր հիշողությամբ,
- ճանաչի՛ր քեզ շրջապատող աշխարհը,
- գուշակի՛ր,
- պատասխանի՛ր հարցերին՝ ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ, ինչի՞ց, ինչո՞վ, ո՞վ,
- ասա՛ հակառակը,
- փոխարինի՛ր մեկ բառով:

Երեխան պետք է կարողանա աշխատանքը հասցնել ավարտին, հաղթահարել դժվարությունները, լինել նպատակասլաց և համբերատար: Ուրեմն՝ ուսումնառության նախապատրաստված լինելը ենթադրում է ինքնուրույնություն, փոխհարաբերությունների կառուցման հմտություն:

Դպրոցին նախապատրաստվելու շրջանում կարող է ոչ միայն անբարենպաստ, այլև խանգարող գործոն լինել խաղալիքների ավելցուկը: Երբ երեխան շրջապատված է անթիվ խաղալիքներով, նրա համար դժվար է կենտրոնանալ մի խնդրի վրա: Նա առավել հաճույքով է խաղում մեկ խաղալիքով՝ հորինելով տարբեր խաղեր: Նրա երևակայության մեջ փայտի կտորը կարող է դառնալ հեքիաթային տուն կամ փոքրիկ լճակ: Երբեմն ավելի մեծ հետաքրքրություն կարող են առաջացնել նմանատիպ իրերը, քան խանութից գնված խաղալիքները:

Խոսենք նաև մեկ այլ կարևոր խնդրի մասին: Կան ձախլիկ երեխաներ: Լինում են դեպքեր, երբ հավասարաչափ օգտագործվում են թե՛ աջ, թե՛ ձախ ձեռքերը: Գաղտնիք չէ, որ երեխաները պարտադրաբար ստիպված են եղել գրել միայն աջ ձեռքով: Աջ և ձախ ձեռքերը ծնվել են միաժամանակ, ունեն նույն անատոմիան: Սակայն դրանք տարբեր կերպ են գործում, որովհետև մանկուց դրանց նկատմամբ եղել են վերաբերմունքի տարբեր դրսևորումներ: Ուրեմն՝ ծնողները պետք է օգնեն երեխաներին աջի նման մարզելու ձախ ձեռքը:

Երեխային պետք է հանձնարարել կատարել նաև կենցաղային սովորական աշխատանքներ: Հանձնարարությունն ուղղորդում է երեխայի միտքը, ստիպում խաղալ իր մտքերով: Դա էլ իր հերթին հետագայում կօժանդակի ուսումնառության արդյունավետությանը:

Երեխայի համար աշխատանքն ու խաղը գրեթե նույն բաներն են: Պարզապես աշխատանքը պահանջում է զգուշություն, ուշադրության առավել կենտրոնացում: Առանց հատուկ պարտադրանքի կատարվող հանձնարարության արդյունքն ավելի լավ է ստացվում: Դա սովորեցնելու կատարյալ կերպ է:

Հիշենք, որ դպրոցում շատ կարևոր է նաև ժամանակը զգալու ունակությունը: Հեռուստատեսությունը, մանկական հեռուստահաղորդաշարերը երեխայի կյանքում ժամացույցի դեր են կատարում: Նրա համար յուրաքանչյուր ծրագիր համընկնում է



digitised by

որևէ իրադրության. առավոտ է, որովհետև հայրը գնաց աշխատանքի, մութն ընկավ՝ «Տուն տոնիկ» հաղորդումն է, ուրեմն՝ պետք է գնալ քնելու, քույրը եկավ դպրոցից, ուրեմն՝ կեսօր է:

Ռեժիմին հետևելը զարգացնում է երեխայի՝ ժամանակի զգացողությունը: Անիմաստ է երեխային ցույց տալ ժամացույցի սլաքները և ասել՝ «Ժամը ինն է, գնա՛ քնելու»: Ժամանակի զգացողությունը դպրոցին նախապատրաստվելու կարևոր պայման է: Եվ կարգուկանոնի մասին երեխայի սեփական պատկերացումների ձևավորմանը համապատասխանաբար էապես նպաստում է ռեժիմը: Թեև երեխայի համար այնքան էլ օգտակար չէ ապրել կատարյալ պայմաններում: Կայուն ռեժիմի պայմաններում երեխայի մեջ ձևավորվում են սովորույթներ, որոնք օգնում են դպրոցում ճիշտ օգտագործելու ժամանակը և ինքնուրույնաբար տնօրինելու նաև ազատ ժամանակը: Երեխայի վրա դրական ազդեցություն է գործում տվյալ առարկան անընդհատ միևնույն տեղում տեսնելը: Կրկնության շնորհիվ զարգանում են նրա ճանաչողական ունակությունները: Երեխաներն առարկաներն ընկալում են ոչ թե մեկուսացված, այլ շաղկապված:

Դպրոցական կյանքի նոր պայմաններին հարմարեցման խթան է հասակակիցների փոքրիկ ընկերակցությունների, մտերիմների շրջանակի ստեղծումը: Դրանցում առկա են ուսուցման տարրեր, և այդ կերպ հող է նախապատրաստվում առաջին դասարանում համակեցության համար: Այս խնդիրն անհամեմատ հեշտ է լուծվում մանկապարտեզում: Ծնողներին խորհուրդ է տրվում օգտագործել տարբեր առիթներ և հնարավոր դարձնել հաղորդակցումը հարևանների, բարեկամների երեխաների հետ: Դա կնպաստի ոչ միայն ճանաչել միմյանց, այլև ինքնաճանաչմանը, իրար լսելու և լսելի լինելու ունակության զարգացմանը:

➤ Վարժություն՝ գնդակով

Երեխայի ծննդյան օրը հյուր եկած փոքրիկներին կարելի է շրջանաձև կանգնեցնել և բացատրել խաղի կանոնները: Հարկավոր է սկսել սեփական դերակատարումից. ասել անունը, որոշ տեղեկություններ իր մասին, նաև արտահայտել անձնական վերաբերմունքը՝ անվան նկատմամբ, ծանոթացնել ծագումնաբանությանը: Օրինակ՝ «Բարև ձեզ, իմ անունը Շուշան է: Ինձ այդպես կոչել է մայրս: Տատիկս էլ է ինձ Շուշան ասում: Ես իմ անունը շատ եմ սիրում, որովհետև ծաղկի անուն է»: Այնուհետև ձեռքի գնդակը (կարելի է և կծիկ, որևէ միրգ կամ իր) փոխանցում է իր կողքին կանգնածին: Հնարավոր է կրկնել անունները, ասել անվան սկզբնատառով սկսվող որևէ դրական հատկանիշ (օրինակ՝ «Բարև Ձեզ, ես անուշիկ Անին եմ», «Ես սիրուն Սոնան եմ», «Ես քաջ Քերոբն եմ» և այլն), կամ ներկայացնել և՛ իրեն, և՛ կողքինին («Ես արագավազ Արմենն եմ, իսկ կողքինս՝ սրամիտ Սուրենը»):

➤ Միավորում՝ ըստ հատկանիշների

Այս վարժության կատարմամբ նպատակ է դրվում փոքրիկ խմբերի մեջ գտնել նմանություններ և տարբերություններ: Կարելի է հրահանգ տալ՝ միավորվել ըստ մազերի գույնի, աչքերի գույնի, ձեռքերի ափի չափի, հագուստի, կոշիկի տեսակի, մազերի երկարության, ծննդյան ամսվա, սիրած ուտելիքի, կենդանու կամ հեքիա-



A.R.A.R.@

քային կերպարի: Վարժությունը կարելի է կատարել նաև առանց խոսքի: Նույն կենդանուն գերադասողները կարող են խմբվել՝ նմանակելով այդ կենդանու ձայնը, և մնջախաղով պատկերել շարժումները: Խորհուրդ է տրվում նաև նկարել, ուրվագծել ընկերական շարժեր: Երեխաների ցանկությամբ խաղ-զվարճալիքներին կարող են մասնակցել նաև մեծերը:

➤ «Ես և նա»: Զույգերով շարք է կազմվում. ձեռքը գլխավերևում՝ զույգի ձեռքը բռնած: Մեկն անցնում է բռնած ձեռքերի «կամարի» տակով և ընտրում որևէ մեկին այն սկզբունքով, որ վերջինս ինչ-որ բանով նման կամ տարբեր է իրենից: Հիմնավորում է ընտրությունը (օրինակ՝ «Ես ընտրում եմ Լիլիթին, որովհետև նա ինձ նման սպիտակ դեմք ունի», «...որովհետև նրա մազերը շեկ են, իմը՝ սև»): Կենտ մնացողն ինքն է սկսում կատարել ընտրություն: Վարժությունը ջերմ մթնոլորտ է ստեղծում, խթանում միջանձնային հարաբերությունները, նպաստում դիտարկելու, համեմատելու, խոսելու հմտությունների զարգացմանը և ուսումնական գործընթացին նախապատրաստմանը: Անչափ կարևոր են նկարչությունը և ծեփակերտումը: Պետք չէ մատիտն ու վրձինը վերցնել երեխայի ձեռքից:Հարկավոր է հնարավորություն ստեղծել պլաստիլինով և խմորով աշխատանքի համար: Դա մարզում է երեխայի ձեռքը և նախապատրաստում գրավոր խոսքին:

Ընտանիքի խնդիրն է՝ պայմաններ ստեղծել, որ երեխաները տարբերեն *աջ, ձախ, բույք, էջ, տող* հասկացությունները: Դժվարությունները պայմանավորված են տեսաշարժողական ունակությունների անբավարար զարգացմամբ, մատների մկանների թուլությամբ: Դրա համար կարելի է վարժել ձեռքը՝ ծանոթանալով տետրին, տողին: Ցանկալի է մեծ վանդակավոր տետրերում գծել ուղղահայաց և հորիզոնական, ուղիղ և թեք գծեր, համադրել դրանք, միացնել կետերը, գծեր քաշել, ստանալ կիսաշրջան, ալիքաձև գծեր, ձվածիր, եռանկյուններ, ուղղանկյուններ և այլն:

Ապագա դպրոցականի համար կարևոր է նաև հոգեբանականարգավորման՝ խաղերի միջոցով կայուն ուշադրության, լսողության, հիշողության զարգացումը: Կարելի է այդ խաղերի մեջ ներգրավել երեխաների ընկերներին:

➤ «Երկինք - գետին»: «Երկինք» կամ «Օդ» ազդանշանով երեխաները ձեռքերը պարզում են առաջ, ափերը՝ վեր: «Գետին» կամ «Հող» ազդանշանով ձեռքերը պարզում են առաջ, ափերը՝ ներքև: Շփոթվողները խաղից դուրս են գալիս: Հաղթողը խրախուսվում է:

➤ «Կրակ և ջուր»: «Կրակ» ազդանշանով ձեռքերը տանում են առաջ, իբր թե հպում կրակին և կտրուկ հետ քաշում: «Ջուր» ազդանշանով ձեռքերը դեպի ներքև են տարածում:

➤ «Ծափ»: Երեխաները շրջանաձև կանգնում են և իրար ձեռքից բռնած քայլում: «Ծափ» ազդանշանով կանգ են առնում, ծափ տալիս և շարժվում հակառակ ուղղությամբ: Այդպես շարունակվում է խաղը:

➤ «Լսե՛ք և կատարե՛ք»: Երեխաներն ազատ կանգնում են իրարից քիչ հեռու: Հնչում է քայլերգային երաժշտություն, և երեխաները քայլում են: Անակնկալ



digitised by

փոխվում է երաժշտությունը: Լսվում է հրահանգ՝ ցանկացած կենդանու անուն, որին բնորոշ շարժումներին երեխաները նախապես ծանոթ են: Օրինակ, «Նապաստակ»՝ ցատկում են զույգ ոտքերի վրա՝ ձեռքերը կրծքին հավասար ծալած, «Արջ»՝ քայլում են աջ ու ձախ թեքվելով, «Ձի»՝ կրունկներով տեղում դոփում են, «Թռչուն»՝ վազում են՝ թևերը կողմ տարածած: «Հավ»՝ կուտ են «ուտում» և այլն: Շարժումներին համապատասխան փոխվում է երաժշտության բնույթը:

➢ «Լսի՛ր ուշադիր»: Երաժշտության հնչյունների ներքո երեխաներն ազատ շարժվում են: Դադարում է երաժշտությունը: Այնուհետև դաշնամուրի մեկ ստեղին խփելու դեպքում երեխաները կանգ են առնում: Կրկին հնչում է երաժշտությունը, և երեխաներն ազատ շարժվում են:

II տարբերակ: Մեծահասակի ծափով (մեկ ծափ՝ նապաստակ, երկու ծափ՝ կատու, երեք ծափ՝ արջ) երեխաները կատարում են կենդանիներին բնորոշ շարժումներ:

III տարբերակ: Լսվում է երաժշտություն: Առաջին ուժգին հնչյունների դեպքում երեխան բարձրացնում է աջ ձեռքը, երկրորդի դեպքում՝ ձախը, և այդպես՝ հաջորդաբար: Նույն կերպ էլ կարելի է իջեցնել ձեռքերը:

Նպատակահարմար է անցկացնել խաղեր, որոնք զարգացնում են կազմակերպական փոխհարաբերությունները, խոսքի ճկունությունը, տրամաբանությունը, ինքնատիրապետումը, հաղթահարում վախը, կաշկանդվածությունը, ցրում լարվածությունը:

➢ «Կրկնի՛ր ինձ»: Մեծահասակը կտրուկ և ռիթմիկ մատիտահարվածներ է հնչեցնում, երեխան արագ և անմիջապես կրկնում է: Կարելի է խաղն ուղեկցել ռիթմիկ երաժշտությամբ:

➢ «Հիշի՛ր ընկերոջդ դիմագիծը»: Խաղացող երկու երեխաներից մեկը «բնորդ» է, մյուսը՝ «նկարիչ»: Նկարիչն ուշադիր նայում է բնորդին, շրջվում և հիշողությամբ ուրվագծում նրա դիմագիծը՝ առանց շեշտադրելու դեմքի թերությունները: Ելնելով անհրաժեշտությունից՝ կարելի է հուշել տիպիկ հատկանիշներ: Օրինակ՝ Վահեն քավ հոնքեր ունի, Լուսինեն՝ փարթամ մազեր, Անուշիկը՝ խոշոր նշաձև աչքեր ...

➢ «Ստվեր»: Հնչում է դանդաղ մեղեդի: Երկու երեխաներից մեկը «Ճամփորդ» է, մյուսը՝ «Ստվեր»: Դաշտով քայլում է ճամփորդը, ծաղիկներ հավաքում, հոտ քաշում, կանգնում, նստում կոճղին և ծաղկեպսակ հյուսում: Նրանից մի փոքր հեռու «Ստվերը» նմանակում է ընկերոջ շարժումը:

Ուրախության մթնոլորտ ստեղծելու նպատակով որպես ընկերական շարժ կարելի է ծիծաղ առաջացնող շարժումներ կատարել:

➢ «Հայելի»: Երեխաներից մեկն իրեն պատկերացնելով հայելիների խանութում՝ կատարում է ցանկացած շարժում: Մյուսները նմանակում են խաղավարին:

Խաղավարը կարող է կանգնել որևէ երեխայի դիմաց: Միայն վերջինս պետք է կրկնի այդ նույն շարժումները:

➢ «Լսի՛ր»: Մի քանի երեխաներ շարք են կանգնում և սկսում թվարկել՝ մեկ, երկու ... Լռում է այն երեխան (օրինակ 3-րդ, որի թիվը նախապես պայմանա-



A.R.A.R.@

կորված է չասել: Այսինքն՝ 3-րդ երեխան լռում է՝ ծափահարելով 3 անգամ, հաջորդ՝ 4-րդ թիվն է ասվում: Խաղը կրկնվում է՝մեկ այլ թվի վերաբերմամբ):

➤ «Կախարդական խոսք»: Խաղավարը հայտնում է, որ ինքը բազմազան շարժումներ է կատարելու: Երեխան կրկնելու է միայն այն դեպքում, երբ խաղավարն իր խոսքում ասում է՝ խնդրեմ: Այդ բառը կարելի է գործածել կամ երկար ընդմիջումներով, կամ անմիջապես իրար հետևից:

➤ «Կամակոր այծիկներ: Երկու երեխաներ, առանց իրար ցավ պատճառելու, ուսուսի կամ ճակատճակատի՝ թեքևակիորեն կամակոր այծիկների կեցվածք են ընդունում: Կարելի է ձեռքերը կրծքի մոտ ծալված պահել՝ ափերն ուղիղ ու խաչաձև իրար թեքևակի հարվածելով: Վրիպողը խաղից դուրս է գալիս: Ընտրվում է նոր զույգ:

➤ «Գուշակի՛ր՝ ինչ են փոխանցում»: Խաղին մասնակցող մի քանի երեխաներ կանգնում են ու հաջորդաբար միմյանց փոխանցում պարկի մեջ դրված տարբեր ծանրության իրեր: Ընտրված երեխան (խաղավարը) պետք է գուշակի, թե ինչ կա պարկում՝ դիտելով երեխաների դիրքը, շարժումը (թեքև, աշխույժ, ծանր, կորացած մեջքով, մի կողմ թեքված ...): Ճիշտ գուշակողները խրախուսվում են, հակառակ դեպքում՝ դուրս մնում խաղից:

➤ «Հետաքրքրասերը»: Լսվում է մեղմ երաժշտություն: Երկու երեխաներից մեկը վերցնում է փակ պայուսակ, որի մեջ դրված է երեխաներին շատ ծանոթ որևէ իր, քայլում սենյակում: Դադարում է երաժշտությունը: Պայուսակով երեխան առանց անունը տալու, բնութագրական հատկանիշներով նկարագրում է պահված առարկան. ինչի՞ համար է, ինչպիսի՞ն է, որտե՞ղ է օգտագործվում և այլն: Երկրորդ երեխան լսում և գուշակում է: Վերջում առարկան ցուցադրվում է:

➤ «Չենք վախենում»: Զրույցի միջոցով հետո պարզում ենք, թե ինչից են վախենում երեխաները: Այնուհետև տրամադրվում են օձի, առյուծի, վագրի, գայլի, այծի, ցուլի ... նկարներ, խաղալիքներ: Առաջարկվում է խաղալ դրանցով, նկարել, կազմակերպել էքսկուրսիա՝ դեպի կենդանաբանական այգի:

➤ «Մութ սենյակում»: Սենյակի պատուհանները ծածկվում են վարագույրներով: Տիրում է մթություն: Սկզբում խմբով, ապա զույգով, այնուհետև միայնակ մտնում են մութ սենյակ և դուրս գալիս:

➤ «Շարունակի՛ր»: Երեխաներից մեկը հորինում է փոքրիկ պատմվածք (դա կարող է անել նաև մեծահասակը), մյուսը շարունակում է:

➤ «Հորինի՛ր պատմություն»: Առաջարկվում է հորինել փոքրիկ պատմություն (ցանկալի է ծիծաղաշարժ):

➤ «Մթություն»: Անհամարձակ, վախկոտ երեխան նստում է լուսավոր, բայց կարծեցյալ մութ սենյակում, փակում աչքերը և պատկերացնում, որ ինքը սենյակում մենակ է: Կազմակերպվում է զրույց այն մասին, որ Անուշիկը մենակ նստել է «մութ» սենյակում և չի վախենում անգամ փակել աչքերը ... Մյուս երեխաները (կամ խաղին մասնակցող մեծերը) այդ ընթացքում կարող են զբաղվել ցանկացած գործով՝դիտել Անուշիկին, նկարել, խաղալ և այլն:



digitised by

II տարբերակ: «Մութ քնում»: Մեծահասակը՝ որպես աքլոր, բռնում է անհամարձակ երեխայի՝ որպես քաջ քաղիկի ձեռքից և նրանք քայլում են մութ սենյակում ու հայտարարում, որ իրենք քաջ են ու անվախ:

III տարբերակ: Նույն երեխան 3-5 րոպե ինքնուրույն, որպես քաջ քաղիկ, շրջում է մութ սենյակում:

Մութ սենյակում երեխան երաժշտությանը համապատասխան կարող է կատարել շան, նապաստակի, արջի…շարժումներ կամ ընդօրինակումներ:

➤ «Կազմի՛ր նախադասություն»: Ցուցադրվում են երկու նկարներ, որոնց թեմաներով կազմվում են կարճառոտ և ինքնատիպ նախադասություններ:

➤ «Ասա՛ հակառակը»: Խաղավարն ասում է բառը կամ ցուցադրում նկարը, երեխան՝ հակառակը (օրինակ, լույս-մութ, մեծ-փոքր, գիշեր-ցերեկ …):

➤ «Գտի՛ր բառը»: Խաղավարը ցույց է տալիս առարկա պատկերող նկարներ կամ ասում բառեր: Երեխան գտնելով երկու առարկաներ ցույց տվող բառեր՝ կազմում է նոր նախադասություն. (շուն և տուն՝ Շունը պահպանում է տունը: Հովիվ և սրինգ՝ Հովիվը սրինգ է նվագում):

Ցանկալի է, որ խաղերին մասնակցեն նաև հարևանի կամ բարեկամի երեխաները:

*Այա Հովհաննիսյան*
*ԿԲԿ մասնագետ*

# ԵՐԱԺՇՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Երեխաների արդյունավետ և տարիքային առանձնահատկություններին համապատասխան զարգացման խնդիրը մեզ դրդում է օգտվել այնպիսի խաղային ձևերից, որոնց միջոցով կդրսևորվեն նախադպրոցական տարիքի երեխաների իմացական կարողությունները: Այս տեսանկյունից մեծ ուշադրություն պետք է դարձնել ուսուցման միջոցների տարատեսակության վրա: Դրանք խթանում են երեխաների ինքնուրույնության և գործուն մտածողության դրսևորումը:

Այս հոդվածի շրջանակներում կդիտարկենք երաժշտամաթեմատիկական խաղերի առանձնահատկությունները, դրանց միջոցով ներազդելու և ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու խնդիրները:

Ուսուցման արդյունավետության բարձրացումը միշտ էլ եղել է հոգեբաններին և մանկավարժներին մտահոգող կարևոր և ժամանակակից խնդիրներից մեկը: Տարրական մաթեմատիկական հասկացությունների ձևավորմանն ու զարգացմանը նպաստող միջոցների շարքում (ավանդական և ոչ ավանդական պարապմունքներ՝ «Գիտունիկների մրցույթ», «Խաղ-ճանապարհորդություններ», դիդակտիկ, հե-



A.R.A.R.@

տարբերաշարժ, ուսուցանող և մաթեմատիկական սյուժետայերային խաղեր) կարևորվում են նաև երաժշտամաթեմատիկական խաղերը: Դրանք հրապուրիչ են և համապատասխանում են այդ տարիքի երեխաների մտածողության գերիշխող (ակնառու-պատկերավոր) հուզականմային վիճակին և հիմք դառնում առաջատար խաղային գործունեության համար:

Երաժշտությամբ ուղեկցվող մաթեմատիկական խաղերը («Նունիկի փիսիկը», «Համեմատի՛ր», «Ըլդիկ-մլդիկ մի ճապատակ», «Ինչու՞ երկու, ինչու՞ մեկ») հենվելով նախադպրոցական տարիքի երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների, ինչպես նաև հոգեկան և մտածողական ունակությունների վրա՝ կատարում են և՛ հետաքրքրությունը շարժող, և՛ ուսուցանող դեր: Դրանք հանդես են գալիս ներդաշնակ ու զուգորդված և խարսխված են մաթեմատիկական հասկացությունների և գեղարվեստական ստեղծագործությունների վրա:

Հարկ է նշել, որ մաթեմատիկական հասկացությունների ուսուցման գործընթացում մաթեմատիկական երգերի օգնությամբ կարելի է ուսման նկատմամբ երեխաների անկայուն հետաքրքրությունը դարձնել կայուն, ինչպես նաև հասնել այնպիսի դրական հատկության ձևավորմանը, ինչպիսին ուշադրության կենտրոնացումն է: Լսելով երաժշտությունը՝ երեխաները կարծես նախապես պատրաստվում են, վերհիշում արդեն ծանոթ երգի բառերի իմաստը: Դա էլ հեշտացնում է տրված մաթեմատիկական խնդրի լուծումը:

Երեխաներին երաժշտությանը ծանոթացնելիս պահպանվում են երգի ուսուցման փուլերին ներկայացվող պահանջները: Ընտրելով երաժշտությունը՝ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն այն պարագան, թե արդյո՞ք դրանք նպաստում են ազգային մեղեդիների նրբերանգների ճիշտ ընկալմանն ու յուրացմանը, այլև՝ դրա համապատասխանությունն այն բովանդակությանը, որը հիմք է ընդունել դաստիարակը: Չէ՞ որ երաժշտությունն այստեղ ինքնանպատակ չէ, այլ հանդես է գալիս որպես մաթեմատիկական որևէ ծրագրային խնդրի (թվի ուսուցման, երկրաչափական պարզ պատկերների, չափի, տարածական և ժամանակային հասկացությունների (աջ, ձախ, առաջ, հետև, վերև, ներքև, օրվա տարբեր ժամանակահատվածների, շաբաթվա օրերի, ընթացիկ ամսվա անվանումների, տարվա եղանակների հերթագայումների) հաղորդման և լուծման միջոց:

Որպեսզի վերը նշված առաջադրանքները մեթոդապես ճիշտ լուծվեն, անհրաժեշտ է ձգտել, որ նախ՝ երաժշտությունը ներդաշնակ լինի ընտրված նյութի հաղորդմանը, ապա՝ վերարտադրումը ցանկալի լինի տվյալ տարիքի երեխաների համար և նպաստի ինչպես մտավոր, գեղագիտական, այնպես էլ բարոյական հատկանիշների ձևավորմանը («Ինչպես օգնեցին», «Խոհանոցում», «Այդ ե՞րբ է լինում» և այլ դիդակտիկ խաղեր, որոնցում ներառված քառյակները երեխաները ներկայացնում են երգով)[1]:

Չափազանց կարևորվում են երգերին առաջադրվող որոշակի պահանջները.

[1] Հ. Հարությունյան, «Խաղալով սովորենք մաթեմատիկա», Երևան, 2003:



digitised by

▪ Քանի որ ուսուցման արդյունավետությունը կախված է երեխաների զգացմունքային տրամադրությունից և ուսման ընթացքում ունեցած վերաբերմունքից, ապա անհրաժեշտ է պահպանել երաժշտության հանդեպ զգացմունքային վերաբերմունքը:

▪ Երաժշտական ստեղծագործությունները պետք է լինեն այնպիսին, որ երգելու ժամանակ դժվարություններ չառաջանան: Դա անխուսափելիորեն կարող է խոչընդոտել մաթեմատիկական խնդրի լուծման գործին:

▪ Դրանք լինեն պարզունակ, արագընթաց, կարճ ու կտրուկ, որպեսզի գրավեն երեխաների ուշադրությունը, հիշվեն, միաժամանակ կատարեն մտավոր գործունեության խթանման դեր:

Եվ այսպես, երգերի մեջ, երգերի միջոցով ձևավորվում է մաթեմատիկական հասկացությունների և որոշակի կանոնների զարգացման համակարգ: Երեխաներին միշտ թվում է, որ երգելով խաղում են և ոչ թե սովորում:

Նախադպրոցական տարիքում մեծ հետաքրքրություն են առաջացնում մանկավարժության մեջ ընդունված ավանդական երաժշտական հաշվեքառյակները, որոնց անվանումն իսկ խոսում է մաթեմատիկային հարակից լինելու մասին: Այդ պատճառով էլ դրանք դառնում են այն բանաստեղծական ստեղծագործությունները, որոնց հիմքում ընկած է սեփական ռիթմիկան: Սա էլ նպաստում է թվերի բնական շարքի հերթականության հեշտ յուրացմանը: Եթե հաշվեքառյակներին միանա նաև երաժշտությունը, ապա դրանք կդառնան մաթեմատիկական երգեր:

Հաշվեքառյակների երաժշտությունը պետք է կատարվի երեխաների տարիքային առանձնահատկությունների, ստեղծագործական ունակությունների զարգացման, երաժշտառիթմիկական շարժման, ձայնածավալի և մանկական նվագարաններով նվագելու հնարավորությունների հաշվառմամբ: Հաշվեքառյակների օգնությամբ կատարվող ուսուցման արժեքն այն է, որ այդ կերպ երեխաները հեշտությամբ են ներգրավվում խաղի մեջ:

*Ես պլյուսն եմ անտարակույս,*
*Ես նշանն եմ գումարման.*
*Կգումարեմ՝ ինչ պատահի,*
*Ինչ ինքներդ կամենաք:*

*Ես մինուսն եմ և անպայման*
*Ինձ բարի եմ համարում.*
*Է՜, ինչ արած, որ հանում եմ.*
*Ես իմ պարտքն եմ կատարում:*

Դաստիարակի աշխատանքի հիմնական նպատակը երեխաներին սովորել սովորեցնելն է: Երեխաների համար էլ առաջատար գործունեությունը խաղն է: Ուստի հանդես գալով խաղընկերոջ դերում, ստեղծելով ազատ, անկաշկանդ միջավայր, ելնելով յուրաքանչյուր խաղերգի բովանդակությունից ու երաժշտության բնույթից՝ դաստիարակը նպաստում է խաղերի ընկալմանն ու յուրացմանը: Ընտրված երաժշտությունը հագեցված է կերպարներով: Ուստի դաստիարակը հաճախ օժանդակում է երգերի բեմականացմանը, ինչպես նաև երեխաների դերասանական ունակությունների դրսևորմանը («Ծաղիկների պարահանդես», «Այգում»):



A.R.A.R.@

Յուրաքանչյուր դիդակտիկ ստեղծագործություն կարող է կիրառվել և՛ որպես խաղերի բեմականացում, և՛ որպես խաղ-զվարճալիք:

Երաժշտամաթեմատիկական խաղերը կարելի է օգտագործել նաև մաթեմատիկական պարապմունքների ֆիզկուլտ-դադարների ժամանակ: Դրանք ոչ միայն ուսուցողական գործընթացի բաղադրամասեր են, այլև ֆիզդաստիարակության նպատակների իրականացման միջոցներ:

*Ձեռքերը կողմ՝ ինքնաթիռն*
*Թռիչքի ենք ուղարկում:*
*Աջ թևը՝ ձախ, ձախ թևն՝ առաջ,*
*Մեկ, երկու, երեք, չորս,*
*Մեր ինքնաթիռն է թռչում:*

*Մեկ, երկու՝ գլուխը վեր,*
*Երեք, չորս՝ ձեռքերը կողմ,*
*Հինգ, վեց՝ լուռ նստել,*
*Յոթ, ութ՝ ծուլությանը վերջ:*

☆☆☆

*Մեկ՝ ասում եմ քույր մատին,*
*Երկու՝ այս ցուցամատին,*
*Երեք՝ միջին մատիկին,*
*Չորս՝ հարուստ մատնեմատին,*
*Հինգ՝ ճստլիկ ճկույթին:*

*1, 2, 3, 4, 5՝ մատիկները քնեցին,*
*Գնդակի վերածվեցին,*
*1, 2, 3, 4, 5՝ հետո նորից արթնացան,*
*Խաղացին, ուրախացան:*

☆☆☆

*Սկսում ենք մենք հաշվել*
*1, 2, 3, 4, 5,*
*Քանի՞ մատ կա աջ ձեռքին,*
*Իսկ քանի՞սը՝ ձախ ձեռքին:*

*Ձեր ձեռքերը թաքցրեք,*
*Մեջքի հետևում պահեք,*
*Հիմա ինձ հետ խաղացեք,*
*Ես ցույց կտամ մեկ մատիկ,*
*Իսկ դուք՝ արագ շատ մատիկ:*

Երաժշտության զուգորդմամբ կարելի է օգտագործել նաև մաթեմատիկական բովանդակությամբ հանելուկներ: Դրանք վերլուծվող առարկաների քանակի, չափի, ձևի և այլ հատկանիշների յուրացման նպատակով իրականացվող մտավոր ինքնատիպ վարժություններ են: Օրինակ.

Կլորիկ եմ, քիչ էլ թմբլիկ,
Առանց թվի ոչինչ եմ ես,
Գիր առջևում ինչ-որ մի թիվ՝
Ես քեզ կասեմ, թե ով եմ ես:
/Զրո/

Ես ունեմ երեք գագաթ,
Երեք կողմ, երեք անկյուն,
Իմ անունն է..........
/Եռանկյուն/

☆☆☆



digitised by

Շատ եմ նման արեգակի,
Ասում են, թե՝ նաև ոսկու,
Նման եմ ես երևի թե
Մեքենայի կլոր ղեկի,
Անեք՝ տեսնեմ, թե ով եմ ես:

/Շրջան/

Ո՞րն է պատկերը այն,
Որ ունի նաև չորս կողմ միայն,
Չորս ընկեր են, չորս եղբայր,
Չորսն էլ իրար հավասար:

/Քառակուսի/

☆☆☆

Այն ո՞ր պահն է տվյալ օրվա,
Երբ մայրիկն է քեզ օրորում,
Տաք վերմակով քնքուշ ծածկում,
Ջերմ համբույրով քեզ քուն բերում:

/Գիշեր/

Երբ արթնանում, լվացվում եք,
Սարքանք անում, հագնվում եք,
Հետո քաղցր թեյ եք խմում,
Մանկապարտեզ ճանապարհվում:

/Առավոտ/

Երաժշտամաթեմատիկական խաղերը կազմակերպվում են մանկապարտեզում անցկացվող յուրաքանչյուր միջոցառման ժամանակ, ազգային տոների նվիրված ցերեկույթներին, տոնահանդեսներին, հիշարժան օրերին (Ամանոր, ծննդյան տոներ…):

Նախընտրելի է նախադպրոցական կրթադաստիարակչական համալիր ծրագրով նախատեսված տվյալ խմբի երաժշտությունը հարմարեցնել մաթեմատիկական խաղերի բովանդակությանը[1]: Հարկավոր է նախապես ընտրել այնպիսի խաղեր, որոնք համեմված են մաթեմատիկական քառյակներով, հանելուկներով և կամ հորինել տվյալ մաթեմատիկական խնդրի իմաստը վեր հանող քառյակներ:

Դաստիարակը ելնելով իրադրությունից և առկա պայմաններից՝ խաղերգերում ևս պետք է կարողանա միշտ կողմնորոշվել, ազատորեն ընտրել ուսումնադաստիարակչական այս կամ այն մեթոդը և արդյունավետ աշխատանքի իրեն սրտամոտ ձևը[2]:

Հռիփսիմե Հարությունյան
ՀՊՄՀ դոցենտ

[1] Л. Л. Венгер и др. Игры и упражнения по развитию умственных способностей у детей дошкольного возраста, М., 1989.
[2] Հ. Հարությունյան, Խաղալով սովորենք մաթեմատիկա, Երևան, 2003:



A.R.A.R.@

# Երեխաներին վարժեցրե՛ք ճիշտ արարքների

Նույնիսկ ամենափոքր (3-4 տարեկան) երեխայի առջև կյանքն արդեն իսկ դնում է բարոյական ընտրության ոչ հեշտ խնդիրներ: Մեծահասակների գործն է՝ ոչ ճիշտ արարքների, փոքրիկի չմտածված գործողությունների կանխարգելումը: Հարկավոր է նրան զինել այնպիսի գիտելիքներով, որոնցով տարբերակվում է, թե ինչն է լավը և ինչը՝ վատը: Ըմբռնելով տարբեր տիպի վտանգավոր արարքների վերաբերյալ ճիշտ վերաբերմունքի կարևորությունը՝ երեխաները կարող են խուսափել դրանցից, իսկ ծայրահեղ իրավիճակներում հայտնվելու դեպքում կփորձեն գտնել ճիշտ որոշումը:

Ձեզ առաջարկվող սյուժեի օրինակով երեխայի հետ միասին, առանց շտապելու, փորձեք հասկանալ այն բոլոր խոչընդոտները, որոնք հայտնվում են հերոսների առջև: Ճնիկի վարքագիծն ու գործողությունները երեխաների մեջ աներկբայորեն համակրանք են առաջացնում: Ճուտիկի արարքները հասկանալի են մանկանը: Գուցե նա ինքն էլ է հայտնվել նմանօրինակ դժվարին իրավիճակներում: Այդ ժամանակ դրանց մասին կարելի է հիշեցնել փոքրիկին: Երեխայի համար ավելի հեշտ է ճիշտ վերաբերմունք ձևավորելն ինչ-որ մեկի չմտածված քայլի, քան՝ իր սեփական արարքների նկատմամբ: Իսկ դուք՝ մեծերդ, միշտ օգնության կհասնեք և ինչ-որ տեղ կբարդացնեք խնդիրը: Փոքրիկը ձեզ հետ միասին փորձում է առանձնացնել գործող անձանց բնավորության գծերը: Այս առումով օգտակար կարող են լինել տեքստում առաջադրված հարցերը: Դրանք փոքրիկներին կմղեն կողքից դիտելու իրենց և անկողմնակալ գնահատական տալ սեփական գործողություններին ու արարքներին:

Երեխան հետաքրքրությամբ կարծագանքի հայելուն մոտենալու առաջարկին և իրեն ու ձեզ ցույց կտա, թե ինչպիսի տեսք ուներ (*տխուր* կամ *ուրախ)* շնիկը:

Այդ զգացմունքներն արդեն ծանոթ են փոքրիկին: Ցանկության դեպքում կարելի է հորինել նմանօրինակ բազմաթիվ սյուժեներ և ընտրել համակրելի հերոսներ: Միայն թե հասցրեք պատմել: Միևնույն ժամանակ սովորեցրե՛ք փոքրիկին շարժվել խելամտության օրինաչափություններով:

## Ճուտիկն ու շնիկը

Կար-չկար՝ մի ճուտիկ կար: Նրա անունն էր Պիկ: Նա դեղին ու փափլիկ էր և շատ նման գարնանային խատուտիկի: Ճատլիկ կտուցով, պստլիկ պոչիկով և փոքրիկ ոլունք-աչիկներով խատուտիկ էր նա: Այնքա՜ն համակրելի էր այդ Պիկը: Ամեն ինչ շատ լավ էր: Միայն թե նա միշտ չէ, որ լսում էր իր Հավ-մայրիկին: Դա շատ էր վշտացնում վերջինիս: (Իսկ դու չե՞ս վշտացնում քո մայրիկին: Կարելի՞ է քեզ լսող համարել):



digitised by

Ահա մի անգամ էլ Հավ-մայրիկն իր ճուտիկ-բալիկներին տանում է մարգագետին: Արևը փայլում է, խոտը կանաչում է, ծաղիկները ժպտում են:

*Չրոսնում է հավիկը,*
*Պոկոտում քարմ խոտիկը,*
*Իսկ հետևից՝ ճուտիկները,*
*Դեղնակտուց բալիկները:*

*Կո՛-կո՛-կո՛, կո՛-կո՛-կո՛,*
*Մի՛ գնացեք դուք հեռու,*
*Թաթիկներով փորփրեք՝*
*Հացահատիկ որ գտնեք:*

(Ի՞նչ է արգելում հավիկն իր ճուտիկներին: Ի՞նչ է սովորեցնում նա իր բալիկներին: Մայր հավիկը հոգատա՞ր է: Ի՞նչ է նշանակում «հոգատար»: Նմա՞ն է նա քո մայրիկին):

Միայն Պիկը չլսեց մայրիկին, չցանկացավ սովորել և արահետով փախավ անտառ: (Ճի՞շտ վարվեց նա: Իսկ դու ինչպե՞ս ես վարվում: Չլսո՞ղ է այդ ճուտիկը: Իսկ դու ինչպիսի՞ն ես):

Վազում է Պիկ ճուտիկն արահետով, ուրախանում, որ մենակ է մնացել: Մտածում է, թե ինչով զբաղվի: Հանկարծ լսում է՝ ինչ-որ մեկը ցածրաձայն լալիս է: Նայում է՝ և ի՞նչ տեսնում. թփերում նստած փոքրիկ շնիկը արցունքները թաթիկով սրբում է և խղճալի վնգստում.

- Օ՜յ - օ՜յ - օ՜յ: Ի՜նչ մեղք եմ ես, որքա՜ն դժբախտ: Ես տուն չունեմ: Ես մեն-մենակ եմ ամբողջ աշխարհում:

- Մի՛ վշտանա, - սկսեց շնիկին հանգստացնել ճուտիկը: -Ուզու՞մ ես՝ ես լինեմ քո ընկերը:

- Ես նույնպես կլինեմ քո ընկերը, - ճստճստաց կողքից ինչ-որ մեկը:

Շնիկն ու ճուտիկը նայեցին. նրանց առջև կանգնած էր փոքրիկ մկնիկը և առաջարկում էր.

- Արի՛ մեզ մոտ և ապրի՛ր մեզ հետ:

(Ահա՜ թե ինչ բարի է մկնիկը: Իսկ դու կհրավիրեի՞ր շնիկին քեզ մոտ: Դու նու՞յնպես բարի ես):

- Այդ ի՜նչ ես ասում, - վրդովվեց ճուտիկը:

- Միայն դու և ճիճուն կկարողանաք ներս սողոսկել քո բույնը: Ահա և վերջ: Իսկ մենք մեծ բակ ունենք: Բոլորին տեղ կլինի:

(Ինչպիսի՞ն է ճուտիկը: Բարեհամբու՞յր: Նշանակում է՝ բարին է ցանկանում: Իսկ քեզ կարելի՞ է բարեհամբույր անվանել: Պատմի՛ր՝ ինչու՞):

Ուրախացավ շնիկը: (Ի՞նչ ես կարծում՝ ինչու՞): Հրավերի համար շնորհակալություն հայտնեց մկնիկին, և ճուտիկը նրան արահետով տարավ ուղիղ իրենց տուն:

- Մայրի՜կ, մայրի՜կ, - ուրախ բացականչեց Պիկը, - ես ինձ համար ընկեր եմ գտել: Նա պետք է ապրի մեզ հետ:

Տեսավ Հավ-մայրիկն ընկերներին և խստորեն ասաց.

- Ո՛չ, ո՛չ և ո՛չ: Շնիկը տեղ չունի ճուտիկների կողքին: Եվ ի՞նչ ընկեր է նա քեզ համար: Նա կարող է ձեզնից որևէ մեկին կծել:

Շնիկը լսեց, լուռ շրջվեց և գլուխը կախ՝ տխուր գնաց՝ ինքն էլ չիմանալով, թե ուր: (Ինչու՞ տխրեց շնիկը: Ինչու՞ կախեց գլուխը):

Իսկ ճուտի՞կը: Ի՞նչ աներ: Մեղք էր շնիկը: Բայց չէ՞ որ մայրիկին լսել էր հարկավոր: Ահա թե ինչպիսի իրավիճակ է: (Տեսնու՞մ ես՝ երեքի համար էլ



A.R.A.R.@

վատ է: Իսկ ո՞վ է մեղավոր: Հիշի՛ր՝ նախքան կարևոր որոշում կայացնելը հարկավոր է խորհրդակցել ծնողների հետ):

Մի անգամ դժբախտություն պատահեց: Խորամանկ աղվեսը լսել էր անհնազանդ ճուտիկի մասին: Երբ վերջինս նորից մայրիկից թաքուն անտառ փախավ, աղվեսը հետևեց նրան և, հա՛մփ՝ ատամներով:

Գոռում է ճուտիկը, մայրիկին օգնության կանչում: Սակայն մայրիկը հեռու է, չի լսում նրան: Իսկ շնիկն արդեն կողքին է: Ընկերոջն օգնության է հասնում: Գռմռում է աղվեսի վրա, հաչում, պոչից քաշ տալիս. «Բա՛ց թող ճուտիկին»:

Վախեցած աղվեսը բաց է թողնում խեղճ ճուտիկին, ինքն էլ փախչում անտառ: (Ի՞նչ ես կարծում՝ ինչու՞ ճուտիկը դժբախտության մեջ հայտնվեց: Իրականում ինչպիսի՞ն է շնիկը: Իսկ դու կօգնեի՞ր ճուտիկին, չէի՞ր վախենա աղվեսից: Կեցցե՛ս, դու նույնպես քաջ ես):

Թռչունների բակում խառնաշփոթ է: Հավիկը փնտրում է անհնազանդ ճուտիկին, իսկ նա չկա ու չկա, և ոչ ոք չի տեսել, թե ուր է փախել: Դառնագին լալիս է մայր հավիկը: Խղճում է նա անհնազանդ որդուն: Ճուտիկները հավաքվել են նրա շուրջբոլորը: Իրենք էլ են հուզվում, բայց փորձում են հանգստացնել մայրիկին: Սակայն ոչ մեկը չգիտեր ինչպես օգնել նրան: (Գուցե դու գիտե՞ս: Ո՞չ: Ես նույնպես չգիտեմ, թե ինչպիսի՛ սխալ արարք էր թույլ տվել Պիկ ճուտիկը: Իսկ դու քո մայրիկին երբեք չե՞ս վշտացրել):

Եվ ահա արահետին երևաց Պիկ ճուտիկը: Նրա կողքից երջանիկ քայլում է շնիկը:

- Մայրի՜կ, մայրի՜կ, - ուրախ բացականչեցին ճուտիկները, - ահա և մեր Պիկը՝ ողջ և անվնաս:

Հավիկը վազեց՝ զավակին համբուրելու, գուրգուրելու: Իսկ շնիկը տխուր հառաչեց և հետ գնաց անտառ՝ մենակ թափառելու աշխարհում: (Ի՞նչ ես կարծում՝ ինչու՞ տխրեց շնիկը: Ինչու՞ նորից գնաց):

Մայր հավիկը նրան կանգնեցրեց.

- Ու՞ր ես գնում, փոքրիկ: Մնա՛, ապրիր մեզ հետ: Շատ շնորհակալ եմ քեզնից, որ փրկեցիր իմ ճուտիկին: Ների՛ր, ես անմիջապես չհասկացա, որ դու իսկական ընկեր ես:

Նա թևիկներով գրկեց ընկերներին և ամուր սեղմեց կրծքին: (Որքա՜ն արդարամիտ է մայր հավիկը: Ինչու՞ ենք մենք նրան այդպես անվանում):

Եվ ապրեց շնիկը բարի ընկերների հետ: (Իսկ թե ինչ անուն դնենք նրան, մտածի՛ր ինքդ):

Պիկ ճուտիկն այլևս չի փախչում մայրիկից: Նա դարձել է լսող և հնազանդ:

Ահա և բոլորը: Վերջ: Կեցցե՛ լսողը:

«Дошкольное воспитание» - 9, 2002,
Մոսկվա

Թարգմանեց Հ. Օհանյանը





digitised by

# ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԲՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ

*Բնական նյութերը /կավը, փայտը, թուղթը և այլն/ առավել մոտ են մարդու նորմալ գործունեությանը: Այդ նյութերով նա ստեղծում է արժեքներ և կուլտուրա: Խաղալիք նյութը ներկայացնում է իսկական իրականություն, միևնույն ժամանակ՝ ստեղծագործական երևակայության ազատության մեծ հնարավորություն:*

*Ա. Մակարենկո*

Աշխատանքի և աշխատելու պահանջի նկատմամբ սիրո ու հետաքրքրության ձևավորումը երեխաների դաստիարակության հիմնական խնդիրներից մեկն է:

Նախադպրոցական տարիքի երեխաների հետ բնական նյութերով կազմակերպվող աշխատանքներն արմատավորում են աշխատանքային հմտություններ, երեխաներին հնարավորություն տալիս ճանաչելու, սիրելու, պահպանելու բնությունը և բնության նկատմամբ դաստիարակվելու հոգատար վերաբերմունքով:

Բնական նյութերը երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացման շտեմարան են: Էքսկուրսիաներից և զբոսանքներից վերադառնալիս երեխաները բերում են ճյուղեր, կոներ, կաղին, տերևներ, լճափի գեղեցիկ քարեր, խխունջներ և այլն: Նրանք երկար ժամանակ դիտում են իրենց հավաքած նյութերը, շոշափում, ուսումնասիրում: Դա էլ նպաստում է գույնի, ձևի, ծավալի, յուրաքանչյուր նյութի հատկությունների ճանաչմանը և մտապահմանը: Օրինակ, երեխաներն իմանում են, որ կաղինը կլոր է, շագանակագույն, մակերեսը՝ հարթ, կոները՝ ձվաձև, փայլուն, դեղնաշագանակագույն: Նախադպրոցականները սովորում են բնական նյութերից պատրաստել տարբեր խաղալիքներ, դիդակտիկ նյութեր, դեկորատիվ և կոմպոզիցիոն աշխատանքներ: Որպեսզի երեխաները կարողանան աշխատել, անհրաժեշտ է զարգացնել նրանց երևակայությունը, ստեղծագործական միտքը, պատկերացումները, դիտողականությունը, հետաքրքրությունը, գործնական աշխատանքում ձեռքի և մտքի աշխատանքի միասնությունը:

Զբոսանքներն ու էքսկուրսիաներն ընդլայնում են պատկերացումները բնության մասին, կատարելագործում ուշադիր զննելու և դիտելու ունակությունները, պահպանում ամբողջական ընկալումը՝ բնական նյութերից խաղալիքներ պատրաստելու ժամանակ: Խաղալիք – նմուշների պատրաստումը երեխայից պահանջում է բնական նյութերի տեխնոլոգիական մշակման /որակավորում, ընտրում, չորացում, մշակում/ իմացություն: Սկզբնական շրջանում երեխայի կատարած աշխատանքի արդյունքը կարող է լինել անհաջող: Հետագայում հետևողական աշխատանքի շնորհիվ փոքրիկը ձեռք է բերում գործողություններ կատարելու համարձակություն և հմտություն:

Ձեռքի աշխատանքը նպաստում է սենսոր զգայարանների, ձեռքի մատների մանր մկանների աշխատանքի զարգացմանը, ճկունությանն ու կատարման ճշտությանը. կատարելագործում շարժումների կոորդինացումը:

Բնական նյութերով աշխատանքը դրականորեն է ներգործում երեխայի մտավոր ունակությունների զարգացման վրա: Եթե հետևենք աշխատանքի ընթացքին, ապա կնկատենք, որ խաղա-



A.R.A.R.@

լիք–նմուշի պատրաստման համար երեխաները նախ՝ ուսումնասիրում են նմուշ-օրինակը, կատարում կառուցվածքի և կատարման եղանակների վերլուծություն, դիտում համապատասխան նկարներ, յուրացնում ամբողջ գործընթացը, ապա նոր միայն պատրաստում խաղալիք–նմուշը՝ տրված ձևով կամ սեփական մտահղացմամբ:

Բնական նյութերով խաղալիքներ պատրաստելու գործընթացի նկատմամբ հետաքրքրությունը նպաստում է նաև երեխաների *ուշադրության զարգացմանը*, ձևավորում կամային ուշադրությունը, հղկում դիտողականությունը, աչքաչափը: Օրինակ՝ «Շունն ու կատուն» դրվագի պատրաստման համար երեխաներին առաջարկվում է ուշադիր դիտել նմուշը, ապա որոշել, թե համապատասխանաբար որտեղ պետք է գտնվեն գլուխը, թաթերը, պոչը և մարմնի մնացած մասերը:

Այդպիսի աշխատանքները հիմնականում բավարարում են երեխաների *հետաքրքրասիրությունը*: Այս աշխատանքներում առկա են գույնի, ձևի, չափի և աշխատանքային գործիքների ընտրության ստեղծագործական որոնումների պահեր, որոնք հնարավորություն են տալիս հասնելու առավել կատարյալ արդյունքների:

Բնական նյութերով պատրաստված խաղալիքները նպաստում են երեխայի *դրական հուզական տրամադրության ձևավորմանը*: Նրան համակում են ցընծությունը, հաճույքը և գեղեցիկը ստեղծելու ցանկությունը: Սիրելի կարող է դառնալ սեփական ձեռքով պատրաստած յուրաքանչյուր զվարճալի և հետաքրքրաշարժ խաղալիք:

Այսպիսով՝ բնական նյութերով աշխատանքը նպաստում է *անձի ձևավորմանը և զարգացմանը*: Խաղալիքի պատրաստումը պահանջում է որոշակի կամային որակներ՝ նպատակաուղղվածություն, համառություն, սկսած գործը մինչև վերջ հասցնելու կարողություն: Երբ երեխան հանդիպում է դժվարությունների, փորձում է ինքնուրույն հաղթահարել դրանք: Երբեմն փոքրիկին չի հաջողվում աշխատանքը, այսինքն՝ շնիկի, կատվի պատրաստման համար ընտրել համապատասխան ձևի կոներ, կեղևներ, ճյուղեր կամ իրականացնել խաղալիքի մասերի ամրացման եղանակները: Դաստիարակի միջամտությամբ նա հայտնաբերում է անհաջողությունների պատճառները, ուղղումներ կատարում և շարունակում աշխատել:

Աշխատանքի այս տեսակը երեխային հնարավորություն է տալիս՝ ձևավորելու *սեփական գործունեության վերահսկումը և գնահատումը*: Այսպես, խաղալիքների պատրաստման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում ոչ միայն վերլուծել նմուշը, պլանավորել գործողությունների հաջորդականությունը, այլև վերահսկել իր աշխատանքը, համեմատել պատրաստած նմուշը նախնական նմուշ – օրինակի հետ և գնահատել:

Բնական նյութերից խաղալիքների պատրաստման աշխատանքը կարող է լինել անհատական և խմբային: Ինչպես մեծերին, այնպես էլ երեխաներին ուրախություն է պատճառում հատուկ կազմակերպվածությամբ բնորոշվող խմբային աշխատանքը: Այստեղ հատկապես կարևոր է, որ երեխաները հասկանան խմբային աշխատանքի արդյունավետությունը և առավելությունները:

Երեխաների *սեփական գործունեությունը պլանավորելու* հմտության ձևավորման նպատակով թույլատրելի է կիրառել խմբային աշխատանքների բազմազան ձևեր: Այդ հնարավորությունը նպաստում է ոչ միայն միասին աշխատելու կարողության ձևավորմանը և զարգացմանը, այլև ընկերասիրությանը, ընկերոջն օգնելու, ընկերոջ հետ աշխատելու, համագործակցելու պատ-



digitised by

րաստակամությանը: Խմբային աշխատանքներում կարևորվում են ընդհանուր նպատակը, գործողությունները բաժանելու հաջորդականությունը, աշխատաքի արդյունքը: Դաստիարակի կողմից խրախուսվող խմբային աշխատանքը ոգևորում է երեխաներին, տրամադրում նրանց նոր խաղալիքների պատրաստման:

Բնական նյութերի տեխնոլոգիական մշակման (ընտրում, մաքրում, չորացում), դետալների ամրացման (մետաղալար, սոսինձ) և աշխատանքային գործիքների (մուրճ, հերյուն, մկրատ) օգտագործման ժամանակ անհրաժեշտ է պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները:

*Ներկայացնում ենք համապատասխան պարապմունքի մեկ օրինակ*

## Բնական նյութերով «Շունն ու կատուն» դրվագի պատրաստումը

Այս կոմպոզիցիան ստանալու նպատակով անհրաժեշտ են կոներ, ճյուղեր, վառ գույնի մորթե և գործվածքե կտորներ, մանրակների (դետալների) միացման համար՝ սոսինձ, մետաղալար, պլաստիլին, մկրատ, հերյուն:

Կոմպոզիցիայի պատրաստման հերթականությունը.

1.Շան մարմնի համար ընտրել որևէ կոն, գլխի համար՝ կաղին և կաղինի «գլխարկը»:

2.Կատվի մարմնի համար ընտրել 2 կոն: Դրանցից մեկը պետք է լինի բացված: Կատվի գլխիկի համար ընտրել կաղին:

3.Կատվի և շնիկի համար համապատասխան ճյուղերից առանձնացնել ոտքեր, թաթեր, ծեռնափայտ, պոչ:

4.Գունավոր թղթերից պատրաստել ականջներ,քիթ, աչքեր, բեղիկներ և սոսնձել գլխիկի վրա:

5.Դետալները միացնել սոսնձի և պլաստիլինի օգնությամբ:

6.Շունն ու կատուն կարող են ամրացվել կամ սոսնձվել փրփրապլաստին կամ ստվարաթղթին: Դրանով ստեղծվում է բալլադի մի տեսարան:

Ներկայացված նյութի նպատակն է՝ օգնել դաստիարակներին ճիշտ կազմակերպել ձեռքի աշխատանքի պարապմունքները. պետք է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները, հնարավորությունները, փորձն ու հմտությունները: Նման մոտեցումը կապահովի երեխաների սկզբնական գիտելիքների, աշխատանքային կարողությունների ձեռքբերումը և ամուր հիմք կդառնա հետագայում արհեստների նկատմամբ հետաքրքրության դրսևորման համար:

Բնական նյութերով աշխատանքների ճիշտ կազմակերպման ընթացքում աստիճանաբար ստեղծվում է հատուկ ունակությունների և հմտությունների համակարգ, որը նպաստում է երեխաների բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը:

*Ժաննա Ավետիսյան*
ԿԲԿ մասնագետ





A.R.A.R.@

# ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԸ

*Նյութեր՝ տարեսկզբի ծնողական ժողովներ անցկացնելու նպատակով*

Երրորդ դասարանը բեկումնային շրջան է կրտսեր դպրոցականի կյանքում: Ուսուցիչների մեծամասնությունը հավատում է, որ ուսուցման երրորդ տարվանից երեխաներն սկսում են իսկապես գիտակցորեն վերաբերվել ուսմանը: Իմացության և ընդհանրապես գիտելիքի հանդեպ նրանք արդեն ցուցաբերում են գործուն հետաքրքրասիրություն: Դա պայմանավորվում է այն հիմնավոր փոփոխություններով, որոնք տվյալ շրջանում կատարվում են երեխաների ընդհանուր մտավոր զարգացման ոլորտում: Հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ երկրորդ և երրորդ դասարանների միջև ընկած ժամանակաշրջանում աշակերտների մտավոր զարգացման մեջ «թռիչք» է տեղի ունենում: Ուսուցման հենց այդ փուլում են աշխուժանում մտածողական գործընթացները: Առավել բուռն ընթացք է ստանում խոսքային մտածողության զարգացումը:

Մտածողության նոր հնարավորությունները ճանաչողական այլ գործընթացների (ընկալում, ուշադրություն, հիշողություն) հիմք են դառնում: Ճանաչված մանկական հոգեբան Դ. Բ. Էլկոնինն այսպես է գրում կրտսեր դպրոցականի զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ. «Այդ հասակում հիշողությունը դառնում է մտածողական, իսկ ընկալումը՝ մտածող»: Ակտիվորեն զարգանում է երեխայի հոգեկան գործընթացներ կառավարելու կարողությունը: Նա սովորում է տիրապետել սեփական ուշադրությանը, հիշողությանը, մտածողությանը: Երրորդ դասարանցիների մտավոր զարգացման այս փոփոխությունները պետք է գործնականորեն կիրառվեն երեխաների զարգացնող ուսուցման աշխատանքներում: Ծնողների հետ զրույցի ընթացքում կարևոր է, որ հոգեբանն ընդգծի նրանց օգնության անհրաժեշտությունն այն աշխատանքների իրագործման հարցում, որոնք ուղղված են այդ տարիքի երեխաների ներուժի դրսևորմանը:

Զարգացած և կազմակերպված ուշադրության հատկանիշներն այն գործոններն են, որոնք որոշում են ուսուցման հաջողությունը կրտսեր դպրոցական հասակում: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ուշադրության տարբեր հատկանիշներն ուսուցման հաջողության մեջ ունենում են անհավասար «ներդրումներ»: Օրինակ, մաթեմատիկայի յուրացման գործում առաջատար դերը պատկանում է ուշադրության ծավալին: Ռուսաց լեզվի յուրացման հաջողությունը պայմանավորվում է ուշադրության բաշխումով, իսկ կարդալու հմտության ձևավորումը՝ ուշադրության կայունությամբ: Այսպիսով՝ զարգացնելով ուշադրության տարբեր հատկանիշներ, կարելի է բարձրացնել ուսումնական տարբեր առարկաների ուղղությամբ աշակերտների առաջադիմությունը: Սակայն դժվարությունն այն է, որ ուշադրության տարբեր հատկանիշներն անհավասարաչափ են զարգանում: Առավել քիչ ազդեցության ենթարկվում է ուշադրության ծավալը:



digitised by

Սակայն այն նույնպես կտրուկ (2,7 անգամ) աճում է կրտսեր դպրոցական տարիքում: Միևնույն ժամանակ ուշադրության այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ բաշխումը, փոխարկումը և կայունությունը, հնարավոր է և անհրաժեշտ զարգացնել: Ուսուցիչը ծնողներին կարող է առաջարկել խաղերի, հանձնարարությունների և վարժությունների որևէ համալիր, որն ուղղված լինի ուշադրության զարգացմանը (ուղղումների միտված սրբագրական հանձնարարություններ, «խճճված գործեր», թաքնված պատկերների փնտրտուքներ և այլն):

Աշակերտների ուսումնական հաջողության ձեռքբերման նպատակով հարկավոր է նախ և առաջ զարգացնել կրտսեր դպրոցականի հիշողությունը: Հիշելու ամենատարածված մեթոդը կրկնողությունն է, որն ապահովում է մեխանիկական յուրացում: Սակայն ուսումնական նյութի ընդլայնմանը զուգընթաց նվազում է այս մեթոդի կիրառման արդյունավետությունը: Այդ պատճառով տարրական դասարաններում երեխաները պահանջ են զգում աշխատանքի այլ գործելաձևերի: Կրտսեր դպրոցականի հիշողության կատարելագործումն առաջին հերթին կապված է հիշելու այնպիսի եղանակների և ռազմավարությունների հետ, որոնց հիմքում ընկած է հիշվող նյութի կազմակերպումը: Իմաստային հիշողության մարզման հնարները և տրամաբանական հիշողությունը պահանջում են առանձնահատուկ ջանքեր:

Տրամաբանական հիշողության հիմք է դառնում մտածողական գործընթացների օգտագործումը: Այն առընչվում է համապատասխան հասկացություններին: Այս կապակցությամբ տեղին է հիշել Լ. Ն. Տոլստոյի հետևյալ արտահայտությունը. «Գիտելիքն այն դեպքում է գիտելիք, երբ ձեռք է բերվում մտքի ջանքերով և ոչ միայն հիշողությամբ»: Որպես հիշելու մտածողական եղանակներ կարող են օգտագործվել իմաստային հիմքերի առանձնացումը, դասակարգումը, պլանի կազմումը և այլն: Նպատակահարմար է երեխաներին ցուցադրել նաև բազմաթիվ հիշողատեխնիկական եղանակներ և բացահայտել գրավոր խոսքի՝ որպես հիշելու միջոցի, հնարավորությունները: Մտավոր գործողությունը հիշելու հիմք օգտագործելու նպատակով հարկավոր է նախապես ձևավորել այն: Օրինակ, մինչ դասակարգման եղանակի կիրառումը անհրաժեշտ է տիրապետել որպես առանձին ինքնուրույն մտավոր գործողություն դիտվող դասակարգմանը: Այս առումով երեխաների հետ տարվող աշխատանքներում կարևոր տեղ է գրավում մտածողական գործընթացների և համարժեք ունակությունների զարգացման խնդիրը:

Հիմնական ուշադրությունը պետք է հատկացնել տրամաբանական մտածողության տարրերին, այսինքն՝ առարկաների տարբեր հատկանիշների ընդգծմանը, համեմատությանը, ընդհանուրի և առանձնահատուկի հայտնաբերմանը, դասակարգմանը, տարրական սահմանումներ ձևակերպելու ունակությանը: Մտածողության զարգացմանն ուղղված ջանքերի հետ միասին ծնողները պետք է հաշվի առնեն երեխաների անհատական առանձնահատկությունները (մտածելակերպը, ճանաչողական ոճը, մտավոր գործողության արագությունը և այլն): Չպետք է անտեսել նաև կրտսեր դպրոցականի մտածողության որակական յուրահատկությունը: Բանավոր խոսքային-հասկացողական մտածողության զարգացման առկայության պայմաններում անգամ մինչև 10 տարեկան երեխաների մեծամասնությունը



A.R.A.R.@

պատկանում է ոչ թե մտածողական, այլ զեղարվեստական տիպին: Այդ պատճառով հասկացողական մտածողության նպատակաուղղված զարգացումը պետք է զուգորդել կերպարային մտածողության կատարելագործման գործընթացին և ուշադրություն հատկացնել մանկական երևակայությանը:

Անցնենք այնպիսի կարևոր խնդրի արծարծմանը, որը վերաբերում է ընթերցանության հանդեպ դպրոցականների հետաքրքրության զարգացմանը: «Մարդիկ դադարում են մտածել այն ժամանակ, երբ դադարում են ընթերցել»,- ասում էր փիլիսոփա Դ. Դիդրոն: Ինչպե՞ս օգնել երեխային, որ նա դառնա ընթերցասեր: Երեխաները երրորդ դասարանում անհավասար վերաբերմունք են դրսևորում ընթերցանության հանդեպ: Որպես կանոն, յուրաքանչյուր դասարանում գոյություն ունեն երեխաների երկու խմբեր, որոնք ընթերցանության նկատմամբ ցուցաբերում են բևեռացված վերաբերմունք: Առաջին խումբը կարդում է շատ և հաճույքով: Երկրորդը, ընդհակառակը, կարդալ չի սիրում, ընթերցում է ստիպողաբար: Այս վերջին խումբը հատկապես անհանգստություն է պատճառում ուսուցիչներին և ծնողներին: Կարդալ չսիրող երեխաները հաճախ վատ են տիրապետում ընթերցանության տեխնիկային: Հատկապես ընթերցողական հմտության բացակայությունը կարող է լուրջ խոչընդոտ դառնալ գրքի հետ երեխայի հաղորդակցման ընթացքում: Այս պարագայում հարկավոր է հատուկ ուշադրություն հատկացնել ընթերցման տեխնիկական կողմի զարգացմանը: Այն, ինչպես և ցանկացած հմտություն, ամրապնդման և կատարելագործման նպատակով պահանջում է ջանքեր և ժամանակ: Նշենք, որ բուն ընթերցանությանը հատկացվող ժամանակը մշտապես բավարար չի լինում: Ընթերցողական հմտության զարգացման համար երեխան ամենօրյա, պարբերաբար կատարվող տնային վարժությունների կարիք է զգում: Ընթերցողական հմտության ձևավորումը սերտորեն առնչվում է երեխայի ընդհանուր խոսակցական կարողության զարգացմանը: Ակնհայտ դժվարությունների դեպքում հարկավոր է դիմել լոգոպեդի օգնությանը: Մանկական ընթերցանության հիմնախնդիրներով զբաղվող մասնագետները պնդում են, որ ընթերցողական հմտությունների մշակման գործում հատուկ դերակատարում ունի երեխայի հուզական վիճակը: Ծնողները պետք է հիշեն, որ իրենց կողմից սիրված և մեծահասակների աջակցությունն ստացող երեխաները, անկախ իրենց թերություններից, ինքնավստահ են: Նրանք առավել հեշտությամբ են յուրացնում ինչ-որ նոր բան, այդ թվում և ընթերցանության տեխնիկան: Երրորդ դասարանցիներից շատերն արդեն դրան տիրապետում են բավականին լավ, սակայն չեն դրսևորվում որպես գործուն և ինքնուրույն ընթերցողներ: Ծնողները հաճախ են բողոքում, որ երեխաները հետաքրքրություն չեն ցուցաբերում գրքերի հանդեպ: Նրանք իրենց ժամանակի մեծ մասը տրամադրում են հեռուստացույցին և համակարգչին: Ընթերցանության պահանջն ինքնիրեն ի հայտ չի գալիս: Այն չի ձևավորվում նաև գրքի հետ ստիպողական հաղորդակցման արդյունքում: Բռնության կիրառումն այստեղ ևս անարդյունք է և անթույլատրելի: Ընթերցանության հանդեպ սերը ձևավորվում է տարիների ընթացքում: Այդ ուղղությամբ առաջնային նշանակություն ունի ծնողների սեփական վերաբերմունքը ընթերցանության նկատմամբ: Ընտանիքում սիրու՞մ են, արդյոք, կարդալ: Տանն



digitised by

առկա՞ է սեփական գրադարան: Երեխան հաճա՞խ է ծնողներին տեսնում ընթերցելիս: Ծնողները ընթերցած գրքի վերաբերյալ իրենց տպավորությունները փոխանցու՞մ են երեխաներին: Հետևու՞մ են գրքերի աշխարհի նորություններին, այդ թվում՝ մանկական գրականության նորահայտ նմուշներին: <u>Ոպես կանոն, ընթերցել սիրում են ընթերցել սիրող ծնողների երեխաները:</u>

*<u>Խորհուրդներ՝ ծնողներին</u>*

Ընթերցանության նկատմամբ երեխայի անբավարար վերաբերմունքով մտահոգ ծնողների համար կարող են օգտակար լինել ամերիկյան հոգեբան Վ. Ուիլյամսի հետևյալ խորհուրդները.

- Ընթերցանությունից ինքներդ հաճույք ստացեք և երեխաների մեջ ձևավորեք նույնատիպ զգացում:
- Երեխաները պետք է տեսնեն, թե ձեզ համար որքա՞ն է հաճելի ընթերցանությունը: Այդ նպատակով մեջբերումնե՛ր կատարեք, ծիծաղե՛ք, հատվածնե՛ր կարդացեք և այլն:
- Ցուցադրե՛ք, թե ինչքա՜ն եք գնահատում ընթերցանությունը: Գրքեր գնեք, նվիրե՛ք, և ինքներդ էլ նվեր ստացեք:
- Թո՛ղ երեխաներն իրենք իրենց համար ընտրեն թերթեր և ամսագրեր (ընթերցասրահներում, գրադարաններում և այլուր):
- Տանը կազմե՛ք ցուցակ, ուր կարտացոլվի ընթերցողական առաջընթացը (ինչքա՛ն գրքեր է կարդացել և ինչպիսի՛ ժամանակահատվածում): Ցուցակը կախեք երևացող տեղում:
- Տանն ընթերցելու հատուկ տեղ առանձնացրեք:
- Պետք է անպայման ունենալ մանկական գրադարան:
- Գրքե՛ր հավաքեք այն թեմաների վերաբերյալ, որոնք նորից որևէ գիրք կարդալու առումով կոգևորեն երեխաներին (օրինակ, դինոզավրերի կամ տիեզերանավերի մասին):
- Առաջարկե՛ք՝ կինոնկար դիտելուց առաջ կամ հետո կարդալ այն գիրքը, որի հիման վրա նկարահանվել է տվյալ ֆիլմը:
- Միմյանց համար հերթով կարդացե՛ք զվարճալի պատմություններ: Հեռուստացույց դիտելու փոխարեն զվարճացրե՛ք ինքներդ ձեզ:
- Խրախուսե՛ք ընթերցող երեխայի հետ ձեր զավակի ընկերությունը:
- Խաչբառե՛ր լուծեք երեխաների հետ:
- Քաջալերե՛ք երեխաների բարձրաձայն ընթերցանությունը (եթե դա հնարավոր է), որպեսզի զարգանան նրանց հմտություններն ու ինքնավստահությունը:
- Հաճա՛խ հարցրեք երեխաների կարծիքը՝ ընթերցվող գրքի վերաբերյալ:
- Խրախուսե՛ք տպագրված ցանկացած նյութի (աստղագուշակություններ, կոմիքսներ) ընթերցանությունը:
- Երեխաներին հաճո է կարդալ ոչ ծավալուն ստեղծագործություններ: Այդ կերպ ձևավորվում է ավարտի և բավարարվածության զգացողությունը:
- Թո՛ղ երեխաները քնելուց առաջ ընթերցեն որևէ ստեղծագործություն:

Ելենա Դանիլովա

*Հոգ. գիտ. թեկնածու, ՌԿԱ հոգ. ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Մոսկվայի թիվ 520 դպրոցի մանկավարժ-հոգեբան*

Թարգմանեց Գ. Մելքոնյանը



A.R.A.R.@

# ԱՇԽԱՐՀԻ ՅՈԹ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԸ

Դահիճի դասավորությունը. եգիպտական բուրգերը՝ «*Մարդ*» մակագրությամբ
Արտեմիսի տաճարը՝ *Մայր*
Օլիմպիայի արձանը՝ *Մանկություն*
Մավզոլոսի դամբարանը՝ *Մեր*
Բաբելոնի այգիները՝ *Կյանք*
Հռոդոսի կոթողը՝ *Սիրտ*
Ալեքսանդրիայի փարոսը՝ *Հայրենիք*
Իսկ կենտրոնում հետևյալ գծանկարն է՝




Հնչում է դասական երաժշտություն:
Երեխաները խմբվում են խառը, շախմատային դասավորությամբ:
Երաժշտությունը մեղմանում է:

Ե՛վ բուրգերը եգիպտական,
Ե՛վ տաճարը Արտեմիսի,
Զևսի արձանն Օլիմպիական,
Ե՛վ կոթողը Հռոդոսի,
Դամբարանը Մավզոլոսի,
Այգիները Բաբելոնի,
Ե՛վ փարոսը Ալեքսանդրիայի
Շատ են հայտնի:

Աշխարհի յոթ հրաշալիք...
Հմայել եք դուք մշտապես,
Բայց կա յոթ այլ հրաշալիք,
Որ չի նշվում պաշտոնապես:



digitised by

*Առաջինը* հենց նա է, ով
Հրաշալիքներն ստեղծեց այդ:

Նա իր ոգով ու հանճարով
Կոչվում է *Մարդ*:

Մարդիկ ճերմակ են,
Դեղին են, շեկ են,
Եվ սև են մարդիկ:
Բայց լոկ մի գույն է
Պետք մարդկությանը՝
Կապու՜յտ, պայ՜րզ երկինք:
Ուզում ես՝ եղի՛ր հարուստ,
Ուզում ես՝ եղի՛ր աղքատ,
Բայց մի բան հիշիր վերուստ,
Որ ահեղ դարում այս բարդ
Մարդը մարդով է հարուստ,
Մարդը մարդով է մարդ:



Կյանքում ուժեղ մարդիկ
Միշտ բարի են լինում:
Ավելի ճիշտ՝ բարի մարդիկ
Միշտ ուժեղ են լինում:
Այնինչ՝ վախկոտները չար են լինում,
Վախենում են պարտվել,
Ու երբ մի տեղ լավն են տեսնում,
Աշխատում են ժխտել:

Այս աշխարհում, բարեկամնե՛ր,
Եթե կան լավ բաներ,
Լավ մարդիկ են ստեղծել միշտ,
Լավ մարդիկ են պահել:

Ա՜խ, չարերը շատ են փորձել
Ջնջել ցեղը մարդկանց
Եվ փոշի ու մոխիր լցնել
Ապրած տեղը մարդկանց:



Բայց քանի որ ապրում են, կան
Այս աշխարհում բարի մարդիկ,
Ասել է թե՝ լավ մարդիկ կան,
Որ զսպում են վատին:
Եթե մարդիկ ապրում են, կան,
Կեցցե՛ն բարի մարդիկ:



Առհասարակ մի գյուտ է մարդը,
Որի լավն է շատը և ոչ թե վատը:



A.R.A.R.@

Հետո ժպիտը…
Ժպտալ չգիտի և ոչ մի կենդանի:

Երաժշտությունն ուժգնանում, ապա նորից մեղմանում է:
Երեխաների դասավորությունը փոխվում է:

Եվ կա երկրորդ հրաշալիք.
Նա է, ով մեզ աշխարհ բերում
Եվ ոչ մեկին ոչ մի անգամ
Ոչ մի վայրկյան չի մոռանում:
Աշխարհին էլ մեզ դավանանի՝
Նա կանգնած է միշտ մեզ համար,
Հրաշալիքն այդ սիրելի
Կոչվում է *Մայր*:



## ՄԵՐ ՏԱՆ ԱՄՐՈՑՆ Է ՄԱՅՐԸ

Մա՛յր իմ, կարծես ինձ ծնեցիր,
Որ խղճիդ չափն իմանան:
Ասիր՝ այնպես բան ստեղծիր,
Որ գալլերն էլ մարդանան:
Որ չդիպչեն էլ մեր ազգին,
Մեր ազգով էլ պարծենան,
Վահա՞ն դարձիր հայոց բազկին՝
Որք է ազգն էլ անվահան:

## *ՄԵՐ ՏԱՆ ԱՐԾԱԹԱՔՈՒՅՆՆ Է ՄԱՅՐԸ*

Մա՛յր իմ քարի, դու սու՛րբ, դու հե՛զ,
Չունես չարի ոչ մի քեն,
Ինձ թվում է՝ միայն դու՛ ես,
Միայն դու՛ ես մայր ծնվել:

## *ՄԵՐ ՏԱՆ ԱՐՔԱ՛Ն Է ՄԱՅՐԸ*

Հազար վիշտ է սիրտդ քամել,
Դու խսկական հայուհի,
Այս անաստված աշխարհում էլ
Դու իմ միակ սրբուհի:



## *ՄԵՐ ՏԱՆ ԱՂԲՅՈՒ՛ՐՆ Է ՄԱՅՐԸ,*
## *ՄԵՐ ՏԱՆ ԱՐԵԳԱ՛ԿՆ Է ՄԱՅՐԸ:*

Երաժշտությունն ուժգնանում և նորից մեղմանում է:
Երեխաների դասավորությունը փոխվում է:



digitised by

Եվ կա երրորդ հրաշալիք.
Դա մենք ենք, որ աշխարհ գալիս
Ե՛վ մեր տեսքով, անմեղությամբ
Նոր իմաստ ենք կյանքին տալիս:
Մենք ձեր հույսն ենք անմահության,
Երկրորդ կյանքն ու հավատն ենք ձեր,
Հրաշալիքն այս անանման
Մենք՝ *Մանուկներն* ենք ձեր:

Երեխաների մեջ միշտ կա հատիկ սրբազան,
Նրանում գալիքն է թաքնված:

Իմ անունը Նարեկ է, ազգանունս՝ Գալստյան: Ծնողներս մանկավարժներ են: Տատիկս ապրում է մեզ հետ, և մենք լավ բարեկամներ ենք: Ունեմ մեծ քույր, որն ամուսնացած է, և ես քեռի եմ երկու հրաշք փոքրիկների: Սա՝ իմ մասին: Իսկ հիմա՝ իմ երազանքը…

Ուզում եմ զգել աստղային այգի
Մեր մոլորակում,
Տանկերն եմ ուզում սահնակ դարձնել,
Հրացաններն էլ՝ գույն-գույն ճայթուկներ:
Ուզում եմ խոսել ծաղիկների հասարակ լեզվով,
Որ ինձ հասկանան երեխաներն ամբողջ աշխարհի:
Շա՞տ բան եմ ուզում:

Ես Տաթևիկ Հակոբյանն եմ: Սովորում եմ երրորդ դասարանում: Հայրիկս, մայրիկս և մեծ եղբայրս ապրում են Ռուսաստանի մի հեռավո՜ր քաղաքում: Ես ապրում եմ իմ տատի ու պապի հետ, որոնց շատ եմ սիրում: Իսկ ծնողներիս ու եղբորս շատ եմ կարոտում: Երազում եմ, որ վերականգնվի իմ հարազատ քաղաքը: Ծնողներս տուն գան, ու ապրենք մեծ, ուրախ ընտանիքում:

Ես Մուշեղ Հակոբյանն եմ: Ինձ այդպես են անվանակոչել՝ ի հիշատակ Մուշեղ պապիս, որը եղել է շատ ազնիվ ու բարի մարդ: Հայրս իրավապահ է, մայրս ուսուցչուհի: Ունեմ ինձնից մեծ երեք քույր: Շատ լավ է լինել իմ քույրիկների միակ եղբայրը:
Հիմա իմ երազանքը... Երազում եմ դառնալ հայրենիքի զինվոր և իմ պապիկի նման հերոսության համար ստացած մեդալներով զարդարել կուրծքս:

Հնչում է երաժշտությունը…Մեղմանում է:
Երեխաների դասավորությունը փոխվում է…

Եվ կա *չորրորդ* հրաշալիք,
Այն է, ինչը մեզ այցելում
Եվ փոխելով սիրտ ու հոգի՝
Ուրիշ մարդ է մեզ դարձնում:
Նրա ուժը՝ մեծ, ազդեցիկ,
Չեզնից ո՞վ չի ապրել, տեսել…





A.R.A.R.@

Հրաշալիքն այս գեղեցիկ
Կոչվում է *սեր՝ աշխատանքի նկատմամբ* :
Մեր աշխարհում ամենագեղեցիկն այն է,
Որ ստեղծված է աշխատանքով,
Մարդկության հմուտ ձեռքով:

Եվ կյանքն ու աշխատանքն այնպես են կապված միմյանց հետ, ինչպես բույսն ու լույսը: Չէ՞ որ իսկական երջանկությունը ծնվում և գոյատևում է ազնիվ աշխատանքի մեջ, որը բնության խորհրդավոր բժիշկն է: Չէ՞ որ բոլոր պտուղներից ամենաքաղցրն աշխատանքի պտուղն է: Եվ ճիշտ է ասված հայկական առածանիում, որ ծառը գովաբանվում է պտուղով, մարդը՝ աշխատանքով:

Արժե ապրել ու հողի մեջ
Ճեղքել հզոր ու խոր հետքեր,
Այնպես, որ քո թողած գործը
Կաղնի լինի ծառերի մեջ:



Հնչում է երաժշտությունը…Մեղմանում է:
Երեխաների դասավորությունը փոխվում է…

Կա *հինգերորդ* հրաշալիք.
Այն է՝ ինչը տիեզերքում,
Որքան գիտեմ, առայժմ կա
Միայն Երկիր մոլորակում:
Եվ հենց նրա շնորհիվ է,

Որ մենք ահա ապրում ենք, կանք:
Հրաշալիքն այս զորավոր
Կոչվում է *Կյանք*:



Արդյոք ինչո՞վ է կյանքը գեղեցիկ.
Մանուկներով է կյանքը գեղեցիկ:
Գեղեցիկ է նա պատանիներով,
Ուսանողներով, լավ ընկերներով:
Գեղեցիկ է նա և հրաշալի՝
Սիրահարներով ամբողջ աշխարհի:

Գեղեցիկ է նա մեր ծնողներով,
Ջարմանահրաշ մայրական սիրով,
Գեղեցիկ է բարի անձերով,
Բարի խոսքերով, հուշարձաններով,
Եվ ճերմակահեր, նաև ազդեցիկ
Ծերուկներով է կյանքը գեղեցիկ:



digitised by

Երբ ես տեսնում եմ մանր հոգսերից շուտ ընկճվողի,
Իսկույն հիշում եմ
Իմ մի ծանոթին, որ ձեռքեր չունի:
Դեռ կարելի է առանց ոտքերի,
Առանց աչքերի:
Բայց մտածե՞լ եք, որ անհնար է
Առանց ձեռքերի:
Դուք մտածում եք,

Որ նա չի կարող երբեք նվագել,
Իր տան դռները բացել ու փակել,
Չի կարող լողալ, մեզ նման պարել
Կամ ծափահարել:
Իսկ եթե փորձեն նրա դեմ ելնել՝
Երբեք չի կարող հրացան բռնել:



Իսկ ինչպե՞ս է, որ
Շատերն ունեն բազուկներ հզոր,
Որոշ կանայք էլ՝ աննման ձեռքեր,
Բայց միանշան հոգսից աշխարհում
Հուսահատվում են, տխրում, դժգոհում:

Նման դեպքերում,
Ես շատ եմ խնդրում,
Ամեն մարդ նայի իր զույգ ձեռքերին,
Ձեռքերը դնի սեփական խղճին
Եվ հիշի, ինչպես վերքը բուժունի,
Իմ այն ծանոթին,
Որ ձեռքեր չունի:



Հնչում է երաժշտությունը...Մեղմանում է:
Երեխաների դասավորությունը փոխվում է...

Կա *վեցերորդ* հրաշալիք՝
Մի հասարակ, աննկատ բան,
Բայց էությամբ իր անհանգիստ
Տիեզերքից էլ անսահման,
Ամեն ինչ էլ զգում է նա՝
Թեև իր հետ վարվում են բիրտ.
Հրաշալիքն այդ տառապյալ
Կոչվում է *Սիրտ*:

Արեգակը եթե այդքան
Մեծսիրտ չլիներ և արդար,
Ինչպե՞ս պիտի հողին, մարդկանց
Բարություն ու լույս տար:



A.R.A.R.@

Եթե ծովը մեծ չլիներ,
Նավերին չէր պահի:
Եթե կաղնին մեծ չլիներ,
Ծիվերին չէր պահի:

Հզոր փիղը բարի է շատ,
Իսկ կարիճը՝ միշտ նենգ:
Կարիճները թունավոր են,
Իսկ փղերը՝ երբեք:

Արծիվները չեն նախանձում
Սողուններին բնավ:
Հզորները չեն նախանձում
Անզորներին բնավ:

Ինչպես արևը երկնքի գեղեցկության արդուզարդն է, այնպես էլ բարությունը բոլոր բարեգործների փայլն ու հմայքն է: Բարեսիրտ մարդն է, որ ամեն ինչ բարի է տեսնում: Չէ՞ որ բարությունը երբեք չի ապրում չար ու անհոգի մարդկանց թշվառ սրտերում:

Օրն սկսենք բարի խոսքով
Եվ կտեսնենք, որ այդպիսով
Կյանքն ավելի կհեշտանա:

Ասում են՝ բարությունը կփրկի աշխարհը: Ես լավատես եմ և ուզում եմ հավատալ:
Եվ եթե այդպես է՝ ես կլինեմ առաջին զինվորը այդ փրկարար ջոկատի:

Հնչում է երաժշտությունը...Մեղմանում է:
Երեխաների դասավորությունը փոխվում է...
Եվ վերջապես կա *յոթերորդ*,
Բայց առաջին հրաշալիք.
Մի սրբություն, առանց որի
Իրենց որբ են զգում մարդիկ,
Իսկ նրա հետ՝ մեծ ու հզոր,
Իսկ նրա հետ՝ հաղթանակող.
Հրաշալիքն այդ կոչվում է
*Հայրենի հող*:

Կարելի է այս աշխարհում
Ապրել նաև առանց բուրգի:
Անհնար է սակայն ապրել
Առանց հողի, *Հայրենիքի*:

Ի՞նչ է հայրենիքը: Այն է մարդու համար,
Ուր ծնվել է ինքը, ուր հողն է մայր:
Եթե հայրենիքը հեռու է, կարոտյալ,
Չի փրկի բժիշկը: Պետք է վերադառնալ:
Հայրենիքը սիրում են ոչ թե այն պատճառով, որ մեծ է ու հարուստ, այլ՝ որ ՔՈՆՆ է:



digitised by

Ի՞նչ է հայրենիքը: Այն է, հյուր չեն որտեղ,
Եվ սեղան չէ լիքը, վայելքներով շքեղ:

Սերը դեպի հայրենիքը քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է: Իսկ առևտրականի համար հայրենիքն իր գրպանն է:

Եթե հայրենիքը մարդ սիրում է լրիվ,
Ապա ամեն քայլը կատարում է լրիվ:
Նա պատրաստ է կրել դժվարություն անվերջ,
Միայն հայրենիքը...չլինի կռվի մեջ:

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ, գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա,
Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում
Սեփական հոգին խորովել չկա,
Ախր ուրիշ տեղ
Սեփական բախտից խռովել չկա:

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ, գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
Ախր ուրիշ տեղ հողի մեջ այսքան օրհնություն չկա,
Այսքան վաստակած հոգնություն չկա:
Ախր ուրիշ տեղ ձյունի մեջ արև,
Եվ արևի մեջ այսքան ձյուն չկա:
Ախր ուրիշ տեղ տեղահան եղած,
Եկած ուսերով Արագած սարի
Ուսերին հենված Սասնա տուն չկա:

Ախր ուրիշ տեղ
Ամեն մի քարից, առվից, ակոսից
Իմ աչքերով իմ աչքերին նայող
Մանկություն չկա:

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ, գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ,
Ախր ես ինչպես ապրեմ առանց ինձ:





A.R.A.R.@

## Հայրենիք

Երազ իմ, երկիր հայրենի,
Հոգսերդ` շատ, հույսդ ` մեծ,
Քարքարոտ երկիր:
Ես մի բուռն եմ քո հողի,
Ես մի ծիլն եմ քո արտի,
Ես մի թերթն եմ քո ծաղկի,
Հայրենի՛ երկիր, Հայաստա՛ն, Հայաստա՛ն…

Երազ իմ, երկիր հայրենի,
Հոգսերդ` շատ, հույսդ ` մեծ,
Արծվաբո՛յն երկիր:
Ես մի բուռն եմ քո հողի,
Ես մի ծիլն եմ քո արտի,
Ես մի թերթն եմ քո ծաղկի,
Հայրենի՛ երկիր, Հայաստա՛ն, Հայաստա՛ն…

Իմ պապերն են քեզ շահել,
Իմ եղբայրքն են քեզ պահել,
Քոնն են որդիք իմ ջահել,
Հայրենի՛ երկիր, Հայաստա՛ն, Հայաստա՛ն…

Շողիկ Սարգսյան
*քաղաք Գյումրի,*
*Ան.Շիրակացու անվան թիվ 16 դպրոցի*
*տարրական դասարանների ուսուցչուհի*

Սցենարը կազմված է Հովհ. Շիրազի,
Հ. Սահյանի, Ա. Սահակյանի ստեղծագործությունների
և ազգային-հայրենասիրական երգերի հիման վրա:





digitised by

## Բնության դասեր

*Հասմիկ Հակոբյան*

### ԹՌՉՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՄԱՌԸ



Մեր բակում և՛ ծառեր կան, և՛ թռչուններ, բայց փիսիկներ էլ կան: Բակի ծայրում մի բարձր, շատ բարձր պատ էլ կա. ա՛յ, այստեղ, կատուներից ու չար տղաներից ապահով, ամեն գարնան բույն են հյուսում և ձագեր հանում թռչունները: Բայց այս տարի պատի վրայի բներում ո՛չ ձագուկ երևաց, ո՛չ էլ թռչուն: «Հավանաբար այդ խորամանկ ու չար կատուները կերել են թե՛ ձագերին և թե՛ թռչուններին», - տխուր մտածեցինք ու վազեցինք պապիկի մոտ:



- Ի՞նչ եք ասում, բոլորի՞ն են կերել այդ անպիտան փիսիկները, - լսելով մեզ՝ հարցրեց պապիկը:

- Երևի բոլորին, - տեսնելով նրա խորամանկորեն ժպտացող աչքերը՝ մի քիչ տարակուսեցինք մենք:

Պապիկը ծիծաղեց.

- Իսկ պատի մյուս՝ արևոտ կողմը նայե՞լ եք:

Բակի դրսի կողմից վազելով պատի մոտ՝ տեսանք, որ իսկապես արևոտ կողմի ճեղքերում երևում են շատ նոր բներ, ուր աշխուժորեն ելումուտ են անում թռչունները:

- Այդ ինչպե՞ս իմացար, պապիկ, - զարմանքով հարցրինք մենք:

- Երեխե՛ք ջան, եթե շոգ ամառ է սպասվում, ուրեմն՝ թռչունները բույն են դնում պատի, ծառի կամ ժայռի ստվերոտ կողմում:

- Ճիշտ որ, պապիկ, այս քանի ամառ է՝ ինչքան շոգ է, - վրա տվինք մենք:

- Այո՛: Իսկ այս ամառ զով կլինի, որովհետև թռչուններն ամենից լավ են նախազգում սպասվող եղանակը: Քանի որ բներն այժմ հյուսել են պատի արևոտ կողմում, ուրեմն՝ այս ամառ շատ չենք շոգի, - ժպտալով բացատրեց պապիկը:

### ՊԱՊԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ



Այդ ամառ հայրիկս ինձ մի գեղեցիկ ժամացույց նվիրեց: Պապը տեսնելով, թե ինչպես ամենացուրտ օրերին անգամ ես երկար թևերով վերնաշապիկ չեմ հագնում, որպեսզի ժամացույցս երևա, բարեհոգությամբ ժպտում էր: Իսկ ես զարմանում էի, թե ինչպես իմ՝ ամեն, ամեն ինչ իմացող պապը կարող է առանց ժամացույցի մնալ, թեև ինչ ճիշտ է՝ ճի՛շտ, երբեք չէի լսել, որ նա որևէ գործից կամ տեղից ուշանար:



A.R.A.R.@

- Բա՛, Ավիկ ջան, ես էլ ժամացույց ունեմ, ի՛մ ժամացույցը, - լսելով ինձ՝ նա շեշտեց իմ բառը:

Ես տարակուսանքով նրան նայեցի: Տատն ինձ «քունջ ու պուճախ քանդող» է ասում. տեսնես՝ այդ որտե՞ղ է պապը պահում իր ժամացույցը, որ ես մինչև հիմա չեմ տեսել:

- Էգուց մեղվանոցի ճանապարհին ցույց կտամ իմ ժամացույցը, - ժպտալով խոստացավ պապը:



Առավոտ ծեգին ճամփա ընկանք, որպեսզի մինչև արևի բարձրանալը մեղվանոց հասնենք: Երբ անցնում էինք մերձակա մարգագետնով, որն այդ միջոցին այնպես կանաչ էր, ասես բոլոր դեղին խատուտիկները միանգամից քաղհանել էին, պապն ասաց.

- Ավի՛կ, մի ժամացույցիդ նայի՛ր, ժամը հինգը դեռ չկա, չէ՞:

Հինգից տասը րոպե էր պակաս. ես զարմացած պապին նայեցի և, չնկատելով ճամփեզրի մասրենիները, ճանկռոտվեցի: Ես շատ եմ սիրում մասրենու նուրբ ու թովիչ վարդերը, բայց, ափսո՜ս, թփերի վրա ոչ մի բացված վարդ չկար:

Լճի մոտով անցնելիս էլ ասես մի չար ձեռք սրբել-տարել էր բոլոր ջրաշուշանները: Անգամ ճանապարհի եզրերին պատատուկի տերևներն էին միայն կանաչին տալիս: Հասանք մեղվանոց: Օ՜հ, ինչ հրաշալի էր օդը մեղվանոցում: Այստեղ արդեն համատարած կանաչի մեջ շատ ծաղիկներ կային:

- Ժամը վեցը կա, չէ՞,- նայելով խատուտիկների ու վարդակակաչների շուրջը բզզացող մեղուներին՝ հարցրեց պապը:

Իրոք, ժամը վեցն էր: Պապն առանց ժամացույցի ժամը ինն էլ իմացավ, տասն էլ: Ամբողջ օրը զբաղված էինք մեղուներով:

- Դե՛, Ավի՛կ ջան, երեքին մոտ է, հանգստանանք մի քիչ, - խորամանկորեն ժպտալով՝ ասաց պապը:

- Պապի, ժամացույցն իմ թևին է, դու որտեղի՞ց գիտես, - արդեն չհամբերեցի ես:

- Գիտե՛մ, Ավի՛կ ջան, ախր շատ բույսեր ծաղկում են որոշակի ժամի, փակվում օրվա որոշակի ժամի:

Այ, տեսնու՞մ ես, խատուտիկներն ու վարդակակաչներն արդեն փակվել են: Նրանք ժամը երեքին են փակվում, իսկ բացվում են առավոտյան ժամը հինգին, վեցին: Մասրենիներն էլ են հինգին բացվում: Կակաչները բացվում են հինգին և փակվում ժամը տասին: Նարգիզներն էլ բացվում են ժամը իննին: Ջրաշուշանները էլ ու պատատուկներն էլ առավոտյան յոթին-ութին են բացվում: Ա՛յ, որ հիմա գնաս լճում լողանալու, կտեսնես՝ ջուրն ամբողջովին պատված է ջրաշուշաններով:

Բա-ա՜, թոռնիկս, սա էլ իմ ժամացույցն է, իմացա՞ր:

Երեկոյան ժամը վեցին, երբ տուն էինք վերադառնում, ջրաշուշաններն արդեն քնել էին լճի...հատակում:

- Ավի՛կ ջան, Սաթիկն իր «օդերևութաբանական կայանում» ծաղիկներով եղանակ է գուշակում: Դու էլ ծաղիկների ժամացույց ստեղծիր, - խորհուրդ տվեց պապը:

- Ա՜յ թե հետաքրքիր կլինի, հա՜, - ուրախացա ես:



digitised by

- Բայց այն էլ իմացիր, - շարունակեց պապը, - ծաղիկների բացվելու և փակվելու ժամերը տարբեր կլիմայական պայմաններում, այսինքն՝ տարբեր շրջաններում աճող ծաղիկների համար տարբեր են: Եվ տարբեր շրջաններում կարելի է ստեղծել արդեն «տեղական ժամացույցներ»:

- Պապի՛, իսկ եթե անձրև գա՞:

- Դե, այդ ժամանակ «ժամացույցը» կկանգնի, - ժպտաց պապը:



*Նանսեն Միքայելյան*

## ՔՈՒՉԻԿՆ ՈՒ ՓՈՒՉԻԿԸ

Ձեռքիս կապույտ փուչիկը
Թռավ, երկինք բարձրացավ,
Բայց շատ տխրեց քուչիկը,
Հաչեց վրաս, բարկացավ:

Բռնել ուզեց, վե՛ր թռավ,
Բայց չհասավ քաջիկը:
-Վա՜յ, բռնեցե՛ք, հեռացավ,-
Ձայն էր տալիս Սաքիկը:



Հասավ ծայրը երկնքի,
Էլ չերևաց փուչիկը:
Աղմուկն անցավ մեր բակի,
Լռեց նաև քուչիկը:

Իջավ գիշե՜ր, զով գիշե՜ր,
Ու երբ լուսինը ելավ,
Մեր քուչիկը նայեց վեր,
Հաչեց նորից՝ հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ:

Պարզ լուսինն էր երևում.
Եվ ուրախ էր քուչիկը:
Նրան այնպես էր թվում,
Թե գտել է փուչիկը:





A.R.A.R.@



# Արևի նվերները

Արեգակը թիկնած սարին՝
Շիկնած նայեց հողին, քարին,
Կանչեց՝ ելե՜ք, ծաղիկ ու փուշ,
Բավական է քնեք մուշ-մուշ:
Ջուր ու փրփուր,
Հով ու զեփյուռ,
Եկե՛ք՝ ձեզ տամ ժպիտ ու բույր:
Եվ արևի կանչով զվարթ
Շարք կանգնեցին ծաղիկ ու վարդ:
Խոտե՜ր, սեզեր՝ մետաքս ու խաս,
Տերև ու սունկ՝ շորերն ատլաս...
Ջրերն ասին՝ տու՛ր, արեգա՛կ,
Մեզ զրնգուն հազար զանգակ,
Հովերն ասին՝ տու՛ր մեզ, արև՛,
Քնքուշ խաղեր, անուշ տաղեր,
Գառներն եկան՝ գարնան կարոտ,
Ասին՝ մեզ տուր փարթամ արոտ,
Հավքերն ասին՝ երկի՛նք տուր մեզ՝
Ելևէջող երգեր պես-պես:
Լեռներն ասին՝ դու մեզ համար
Հույսով, լույսով միշտ արթնացի՛ր,
Դաշտերն ասին՝ դու մեզ վրա
Ծիածանի կամա՛ր դարձիր:
Եվ արևը հարցրեց մարդուն.
- Շռայլաբույր ի՞նչ տամ ես քեզ:
Մարդը ժպտաց խորախորհուրդ,
Երկինք նայեց խոնարհ ու հեզ:
Ասաց՝ քեզնից, բարի արև,
Խաղաղություն եմ լոկ ուզում,
Երջանկություն, ժպիտ ու երգ
Իմ ձեռքով եմ ես միշտ հյուսում:



digitised by

Գուրգեն Գաբրիելյան

# ԾԱՂԻԿՆ ՈՒ ՄԵՂՈՒՆ

Մեղուն՝ տոտիկը
Փոշոտ,
Թռավ սիրուն
Ծաղկի մոտ.
- Լսի՛ր, ծաղի՛կ,
Տու՛ր ինձ փոշիդ
Քո անուշ,
Որ շուտ փեթակ ես գնամ,
Մեղր շինեմ
Քաղցրահամ:



- Չե՛մ տա, ինչու՞
Իմ փոշին
Ես պիտի տամ
Ուրիշին...
- Ուրիշ չեմ ես,
Խատուտի՛կ,
Բարեկամն եմ
Քո մոտիկ:
Ինձ էլ, քեզ էլ
Այս այգում
Մեր Վանուշն է խնամում.
Արի՛, տուր ինձ
Քո փոշին,
Ես էլ մեղր՝
Վանուշին...



## ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Հողից է ծնվում,
Հողից է սնվում,
Իր մահով՝ իր պես
Հազարն է ծնում:
/Սունկ/



Արևի պես է,
Կլորերես է,
Սերմը՝ ճնճղուկի
Կտուցի պես է:

/Արևածաղիկ/







Հազար թև ունի՝
Չի թռչում օդում,
Ճնչում է մարմնով,
Սնվում է ոտով:
/Ծառ/

Թևիկներին՝ խալեր սիրուն,
Ծաղիկներին շատ է սիրում:

/Թիթեռ/





A.R.A.R.@

**Алиева Фарида**
**Институт Открытое Общество – Азербайджан**

# Индивидуализация и дифференциация процесса обучения младших школьников

## Введение

Детей, которым предстоит жить в XXI веке, ждут большие перемены. Скорость и масштабы происходящих изменений требуют непрерывной и хорошо продуманной адаптации молодого поколения. Преследуя цель подготовить детей к решению проблем, которые ожидают их в будущем, необходимо научить их учиться в течение всей жизни. Чтобы дать каждому ребенку возможность стать активным гражданином нового мира мы должны развивать у каждого из них:

- творческое начало;
- воображение и изобретательность;
- способность к критическому мышлению;
- выявлять проблемы и находить их решение;
- умение делать самостоятельный выбор;
- неравнодушное отношение к проблемам общества, окружающей среды.

На Земле не было, нет и не будет двух совершенно одинаковых людей. Основная и неоспоримая задача школы-раскрыть индивидуальность ребенка, помочь ей проявиться, развиться, обрести устойчивость к социальным воздействиям. Вне обучения развитие невозможно. Как школа может реализовать эту задачу? Сегодня многие сходятся в том, что только индивидуализация может решить эту проблему.

В каждом человеке заложены способности, толкающие его на реализацию своих возможностей. Не учитывая индивидуального, познавательного и жизненного опыта ребенка, непродуктивно используя их, мы занижаем планку развития личности, часто программируем неуспешность в обучении и воспитании, порождаем разного рода комплексы и конфликты. Что же является важным для интеллектуального развития ребенка?

1.Создание адекватной обучающей среды и творческого процесса, при котором исчезают страх и тревожность.

2.Использование разных видов памяти, языков кодирования информации, индивидуальных стилей работы.

3.Проживание знаний, умений и навыков на уроке.

4.Наполнение жизни ребенка событиями, в которых приобретается и анализируется новый опыт, проверяется приобретенный навык.



digitised by

5.Сравнение достижений учащихся только с его прошлым результатом.
6.Постоянный мониторинг ее развития .

Такой подход разворачивает ребенка к самому себе, дает ему осознать свою значимость и неповторимость. Он инстинктивно открывается навстречу тому, что его развивает и формирует. Безусловно, все дети разные, но все они равны с точки зрения права на развитие собственных интеллектуальных сил и учет уникальности склада своего ума.

Сегодня у родителей два пожелания школе:

- проявление максимального внимания к обучению именно его неповторимого ребенка;
- воспитания у него умения учиться и самостоятельно черпать ресурс знаний.

Эти пожелания связаны с быстро меняющейся жизнью, где все большим спросом пользуются специалисты, умеющие повысить свою квалификацию в процессе работы, способные к деятельности, в осонове которого лежит индивидуальное творчество.

**1. Индивидуализированное обучение**

В начальной школе индивидуальные различия каждого ребенка ососбенно заметны. Выбираемый учителем средний темп работы на уроке оказывается нормальным лишь для определенной части учеников. Для других он слишком быстрый, для третьих – замедленный. Одна и та же задача для одних детей является сложной, для других легкоразрешимой. Иначе говоря, успешность усвоения учебного материала, темп овладения им, прочность и осмысленность знаний зависят от познавательных возможностей, способностей учащихся, их физического развития. Но поскольку каждый малыш неповторим, новые задачи школы вновь и вновь возвращают нас к педагогике индивидуального подхода, которая имеет в виду не приспособление целей и основного содержания обучения к отдельному школьнику, а приспособление форм и методов педагогического воздействия индивидуальным особенностям ребенка с тем, чтобы обеспечить как можно более высокий уровень развития личности.

В индивидуальном подходе нуждаются как малоспособные ученики с ярко выраженной задержкой развития, так и высокоодаренные дети. Главная ценность – сам ученик, со всеми его сильными и слабыми сторонами, преимуществами и недостатками, неповторимыми личными особенностями.

Индивидуализированное обучение является методом преподавания, которое учитывает вклад каждого отдельного ребенка в процессе обучения. Этот метод основывается на том, что не может быть двух детей, которые могли бы участвовать в учебных занятиях совершенно одинаково. Чутко реагировать на эти различия – задача каждого учителя. Кроме повышения эффективности обучаемости, методы индивидуализированного обучения укрепляют атмосферу терпимости и взаимоуважения, повышают самосознание и самооценку ученика. При индивидуализированном обучении утверждаются демократические ценности, которые помогают детям развить их потенциал, становится ответственным за свое обучение.



A.R.A.R.@

Индивидуализированное обучение должно происходить одновременно на нескольких уровнях: класса, группы учеников, на уровне интересов и потребностей конкретного ребенка. Учащиеся могут объединять общие интересы к какому-либо предмету или теме, общий стиль обучения, общее развитие. Индивидуализация способствует активному участию детей в учебном процессе, повышению самооценки, успешному обучению.

Наблюдения показывают, что многие ученики характеризуются преподавателями как „ленивые" и „неспособные". Однако, поведение, описываемое ка „лень" может являться симптомом каких-то внутренних проблем. Ученики с проблемами обладают некоторыми из следующих характеристик: им бывает трудно сосредоточиться, они легко отвлекаются и часто находятся в своем собственном мире; им может неудаваться развитие и использование когнитивных стратегий, у них могут быть слабо развиты моторные навыки и проявляться сложности с устной речью; быть плохие организационные способности и неразвитое чувство времени. Такие дети часто оказываются вовлеченными в неподходящее социальное поведение, у них также может быть занижена самооценка . Они кажутся неуклюжими и имеют плохую кординацию движения, и, конечно, у них наблюдаются проблемы эмоционального характер.

Невзирая на учебный план, мы обязаны разрабатывать программы, отвечающие личным нуждам учеников. На первом этапе важно определить, кто он -этот ученик, что он знает, как себя ведет, каковы его интересы, что его волнует и тревожит, каков стиль его обучения, как он приспосабливается к новым ситуациям, есть ли у него проблемы со здоровьем, как он ведет себя дома. Наступает момент, когда учитель становится хорошим наблюдателем для того, чтобы помочь ученику справиться с трудностями, поверить в себя.

Какие вопросы задает себе учитель, наблюдая за учеником:

- Каких специфических навыков ему не хватает?
- Какие из них нуждаются в развитии в первую очередь?
- От каких заданий он получает удовольствие?
- Как долго он выполняет задание?
- Как ведет себя в классе?
- Как ладит со своими сверстниками?
- Как справляется с трудностями?

Определив соответствующий уровень ученика, учитель выбирает какую-то особую цель, которая может быть достигнута в заданных временных рамках; разрабатывает и применяет специфические методы, дающие ребенку возможность достичь цели; оценивает прогресс, сделанный учеником; старается модифицировать программу, если ученику трудно достичь цели или ставит новую цель, если ученик выполнил все ожидания. В качестве оценки могут использоваться описательные замечания, тетради или чек-листы для регистрации информации. Важно думать об оценке вместе с учениками, вовлекать их в размышление о своем академическом прогрессе .



digitised by

## 2. Индивидуализация и дифференциация обучения младших школьников

Основываясь на наблюдении и оценке, учителя могут запланировать развитие какого-нибудь навыка, который ученик должен приобрести. Важно, чтобы планируемая деятельность была связана с выполняемой в классе работой, с использованием материалов и текстов, которыми пользуются другие ученики . При работе в статичных парах, парах сменного состава и малых группах учащимся предлагаются задания разного уровня сложности и индивидуальные задания, которые ученик может выполнить с небольшим усилием. По оценке процесса и результатам педагогической диагностики строится индивидуальная система педагогической коррекции, используется прием уровневой или предметной дифференциации,где каждая индивидуальность представлена, как неоспоримая ценность. Если учитель чувствует необходимость дополнительной поддержки от родителей и других профессионалов, вовлеченных в образование данного ученика, он планирует с ними встречу в нейтральной комнате, используя круглый стол или поставив в круг стулья так, чтобы все чувствовали себя на равных, как партнеры, а не соперники в образовании ребенка. В таком случае формируется глубокая экспертная оценка проблемы и ученик может получить ту помощь, в которой нуждается. Весь учебный цикл предусматривает сбор информации, определение учебных и воспитательных целей, планирование и осуществление намеченного с последующей модификацией программы, различные виды активности на уроках, дифференциацию знаний по типу интеллекта и уровню сложности.

Наиболее сложные вопросы, которые стоят перед учителем при индивидуализированном обучении — это вопросы о том, как дифференцировать детей, по каким критериям выделять их особенности, каким образом определять начальный уровень развития, от которого нужно отталкиваться в организации процесса обучения. Для организации дифференцированной работы с учениками начальной школы принимаются во внимание следующие параметры: внимание, произвольность, работоспособность, логическое мышление, способность к самоконтролю, познавательная мотивация, речевое развитие, развитие мелкой моторики. На основании результатов обследования, учащиеся могут быть распределены на 3 группы:

1) учащиеся, характеризующиеся слабой подготовленностью к школе, недостаточностью сформированности двух-трех психических проиессов или необходимых учебных умений; они нуждаются в постоянном внимании со стороны учителя;

2) достаточно подготовленные к школе учащиеся, владеющие основным обязательным объемом знаний и умений; этим учащимся требуется определенная помощь со стороны учителя при обобщении изученного;

3) высокая степень подготовки к школе, выраженная познавательная мотиваиия, способность к творчеству при выполнении заданий.

Состав сформированных групп может меняться на протяжении обучения. Диагностика этапов развития ученика создает возможность строить процесс обучения на оптимальном уровне трудности. Работа с учащимся каждой из трех групп имеет свою специфику.



A.R.A.R.@

Учащимся, входящим в третью группу, предоставлена наибольшая самостоятельность. Они получают трудные, но интересные задания, направленные как на усвоение изученного материала, так на расширение и творческое применение знаний. Предлагаемые задания иногда превосходят по объему те, которые предоставляются остальным учащимся. Задания составляются таким образом, чтобы ученики, выполняя их, действовали не механически, а делали обобщения, сравнения и выводы.

Во второй группе даются задания, формирующие навыки анализа и синтеза. Вместе с учащимися третьей группы эти учащиеся привлекаются к объяснению нового материала и выполнению заданий творческого характера.

Ученики первой группы нуждаются в постоянном текущем повторении и закреплении полученных знаний. Анализируя их уровень знаний, умений и навыков, учитель предлагает им задания, восполняющие пробелы в знаниях и облегчающие усвоение нового.

Много возможностей дла внутренней дифференциации представляет коллективная работа. Задание дается группе от трех до пяти человек, а не отдельному ученику. В малой группе учащиеся находятся в более благоприятных условиях. В организованном научном диалоге они могут высказать свое мнение, активнее участвовать в решении учебных задач в соответствии со своими интересами и способностями.

В начале каждой четверти учителя готовят список всех видов заданий и упражнений, которые сделают работу детей интересной, охватят содержание обучения по данному предмету и будут приспособлены к нуждам отдельных учеников. Уровень сложности задания определяется характером мыслительного процесса, степенью сложности предметного материала.

*К первому, репродуктивному уровню, относятся простые задания, отражающие:*

• фактологический материал, требующий простого воспроизведения информации, полученной за текущий учебный период;

- вопросы, связанные с выявлением знания терминологии;
- решение задач по готовым образцам и алгоритмам;
- воспроизведение материала по готовому образцу.

**Ко второму, конструктивному уровню, относятся задания средней сложности, которые предполагают:**

- использование полученных ранее знаний средней сложности,
- использование полученных ранее знаний в измененных ситуациях;
- выведение обобщений на основе усвоенного материала;
- понимание определенных явлений и закономерностей, нахождение причинно-следственных связей;
- умение выделять главную идею или существенные признаки, анализировать, логически мыслить,

**К третьему, творческому уровню, относятся сложные задания, предполагающие:**

- использование сложной терминологии;
- составление объяснений определенным явлениям и закономерностям;



digitised by

- понимание причинно-следственных связей между непосредственно не связанными друг с другом предметами и явлениями, знаниями из различных разделов данной науки, а также связей межпредметного характера;
- использование знаний в новом контексте и разработка новых, оригинальных способов решения задач;
- развитие навыка формулирования проблемы на основе предложенной информации.

3. Необходимые условия реализации дифференцированного обучения

Индивидуальный подход включает в себя следующие элементы, тесно связанные между собой и представляющие периодически повторяющийся цикл: систематическое изучение каждого ученика, постановка ближайших педагогических задач в работе с ним, выбор и применение наиболее эффективных средств индивидуального подхода, фиксация и анализ полученных результатов, постановка новых педагогических задач.

Обязательным элементом обучения является анализ. Он не только отражает результаты совместной деятельности учителя и ученика, но и предоставляет материал для корректировки и дальнейшего совершенствования. Строгий учет индивидуальных достижений программы работы с учениками дают возможность планирования дальнейшего обучения, направленного на повышение его уровня. Составляемое два раза в год Резюме, отражает индивидуальный прогресс каждого ученика по следующим параметрам:

***Организация учебного труда:***

- умение работать по заданному образцу,
- возможность выполнять задания повышенной сложности;
- умение работать в паре;
- умение продуктивно работать самостоятельно;
- способность объективно оценить ответ одноклассника;
- темп работы.

***Работа с книгой и другими источниками информации:***

- владение навыком плавного чтения;
- понимание прочитанного;
- умение соблюдать паузы между предложениями и абзацами;
- умение ставить логическое ударение;
- умение найти нужную страницу, упражнение, справочный материал;
- умение пользоваться таблицами и схемами;
- способность самостоятельно изучить теоретический материал и выполнить тренировочные упражнения по образцу и на творческом уровне;
- умение определять примерное содержание незнакомой книги;
- охотно читает.

***Культура устной и письменной речи:***

- умение отвечать на вопросы по теме;
- умение самостоятельно формулировать вопросы по тексту, картине;



A.R.A.R.@

- умение пересказывать художественный и научно-популярный текст;
- демонстрация знаний теории по всем предметам;
- умение списывать текст без ошибок и исправлений;
- умение излагать текст по готовому плану и вопросам;
- скорость письма;
- усвоение правил правописания.

Организация процесса обучения в условиях внутриклассной дифференциации позволяет формировать у учащихся положительную познавательную мотивацию, способствует их всестороннему развитию.

***Заключение***

Успешное развитие познавательной активности и самостоятельности учащихся возможно тогда, когда учебный процесс ориентирован на ребенка и организован как интенсивная интеллектуальная деятельность каждого.ребнка с учетом его особенностей и возможностей.

Дифференцированный подход к школьникам — это важнейший принцип воспитания и обучения. Его реализация предполагает изменение отдельных сторон содержания учебно-воспитательной работы, постояное варьирование его методов и организационных форм с учетом общего и особенного в личности каждого ученика.

Дифференцированный подход в учебном процессе означает оказание внимания каждому ученику, его творческой индивидуальности в условиях классно-урочной системы обучения по обязательным учебным программам, предполагает разумное сочетание ффронтальных, групповых и индивидуальных занятий для повышения качества обучения и развития каждого ученика.

## *Литература*

1. Беспалько В.П. Педагогика и прогрессивные технологии.М.,1995.
2. Репкина Н.В. Система развивающего обучения в школьной практике. Вопросы психологии,1997,#3
3. Руководство практического психолога:Готовность к школе: развивающие программы: Метод. пособие/И.В. Дубровина, А.Д.Андреева,
Т.В.Вохмянина и др.;Под.ред. И.В. Дубровиной.-5-е изд.-М.:Издательский центр «Академия»,1999.-96с.
4. Унт И.Э. Индивидуализация и дифференциация обучения, М., 1990
5. Хелус З. Понимаете ли вы ученика? М., 1995
6. Шабалина З.П. Дифференцированный подход в обучении младших школьников. Начальная школа. 1990. N6

digitised by A.R.A.R.@

CENTER FOR EDUCATIONAL REFORMS

digitised by A.R.A.R.@